

**ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԸՆՏՐԱԿԱՆ ԵՎ ՀԵՏԸՆՏՐԱԿԱՆ  
ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
Գագիկ Տերտերյան**

Հայաստանի նախագահական ընտրությունների հետ կապված հայտնի զարգացումներն այսօր վերլուծվում են հանրության ամենատարբեր հատվածներում եւ մակարդակներում: Այդ համատեքստում, թերեւս, ավելորդ չեն նաեւ ստորեւ ներկայացվող վարկածային դիտարկումները:

**«Մասնակի հեղափոխություն»**

Ըստ մեզ, ընտրական եւ հետընտրական գործընթացները ՀՀ-ում, առաջին հերթին, կարիք ունեն հստակ բնորոշումների, որոնք առաժնորոշակիորեն չեն հնչել ո՛չ հայկական տեղեկատվական դաշտում (ինչն այդ ոլորտի բազմաթիվ թերացումներից մեկն է ընդամենը), ո՛չ էլ պաշտոնական ելույթներում (թերեւս, հասկանալի պատճառներով):

Որոշ վերլուծաբաններ, հենվելով սերբական, վրացական, ուկրաինական, կիրգիզական եւ այլոց փորձի վրա, Լ. Տեր-Պետրոսյանի ընտրական կամպանիան եւ հետագա զարգացումները ներկայացնում են որպես դասական «գունավոր հեղափոխության» (ԳՀ) սցենար, եւ նման պնդման հետ դժվար է չհամաձայնել: Հայտնի է նաեւ, որ ներկայիս ԳՀ-ների հենքում դրված է օտար միջամտությունը. դրանց հիմնական հեղինակներն անգլո-ամերիկյան ծառայություններն են, որոնց երբեմն աջակցում են նաեւ եվրոպական որոշ երկրների (Սերբիայում՝ գերմանական, Ուկրաինայում՝ լեհական) համապատասխան կառույցները: ՀՀ-ի պարագայում կան անուղղակի վկայություններն այն բանի, որ կատարվածը գլխավորապես ծրագրվել է Մեծ Բրիտանիայում, կան նաեւ կարծիքներ այլ՝ ոչ եվրոպական երկրների մասնակցության մասին: Այս ամենի առիթով նկատենք, որ այսօր Արեւմուտքում կատարվում եւ հրապարակվում են բազմաթիվ հետազոտություններ, որոնց նպատակն է վերլուծել եւ բացահայտել այս կամ այն երկրում հեղափոխություններ կատարելու համար անհրաժեշտ նախադրյալները եւ պայմանները: Այսինքն՝ ձեւավորվել է գիտական մի նոր ուղղություն, որը պայմանականորեն կարելի է անվանել «հեղափոխագիտություն»<sup>1</sup>:

Միեւնույն ժամանակ, ըստ մեր վարկածի, ՀՀ-ում կատարվածի նպատակն (ի տարբերություն այլ ԳՀ-ների) «ամբողջական հեղափոխությունը» չէր: Այդ գործընթացը պայմանականորեն կարելի է անվանել «մասնակի հեղափոխություն», այսինքն՝ նախագծի հեղինակները նպատակ չէին դրել իշխանափոխություն կատարել ՀՀ-ում: Նման մոտեցումը հիմնավորված է հետեւյալ նկատառումներով:

Կասկած չի հարուցում, որ ԳՀ-ի իրական հեղինակները պետք է հստակ գիտակցեին, որ՝

- ❖ ՀՀ-ն բավական ամուր պետականություն ունեցող երկիր է (դա հետեւում է թեկուզ արեւմտյան հետազոտական կենտրոնների կողմից կազմված բազմազան վարկանիշային ցուցանիշներից եւ պետք է որ հաստատվի նաեւ տարբեր խողովակներով առաքվող «փակ» վերլուծություններից),

- ❖ ՀՀ ղեկավարությունը, ունենալով բավարար քաղաքական կամք եւ մասնավորապես պատերազմական փորձառություն, երբեք ուժային կամ հոգեբանական ճնշման տակ չի զիջի իշխանությունը,

- ❖ Ռուսաստանը, որը Հայաստանում ունի լուրջ ներկայություն եւ շահեր, թերեւս, ընդունակ է ձախողելու իր ռազմավարական դաշնակցի նկատմամբ մմանօրինակ սցենարները:

Որ կատարվածի նպատակն իշխանափոխությունը չէր, անուղղակիորեն վկայում են նաեւ աշխարհաքաղաքական իրողությունները: Առայսօր անգլոսաքսերի վարած ռազմավարությունը ՀՀ-ի նկատմամբ սխեմատիկորեն կարելի է բնութագրել հետեւյալ դրույթներով.

1. ԱՄՆ-ը եւ նրա դաշնակիցները, ելնելով իրենց տարածաշրջանային քաղաքականության տրամաբանությունից, ձգտում են հնարավորինս խարխլել ՀՀ-ՌԴ դաշնակցային հարաբերությունները, իսկ լավագույն տարբերակում՝ դրանց հաղորդել երկրորդական նշանակություն:

2. Ելնելով, մասնավորապես, Ցեղասպանության եւ ԼՂՀ հիմնախնդիրներից, ԱՄՆ-ը եւ նրա դաշնակիցները ՀՀ-ն դիտում են իբրեւ Ադրբեջանի եւ Թուրքիայի դեմ որոշ իրադրություններում զսպիչ գործոն:

3. Երկրորդ կետի համատեքստում հավելենք, որ հաճախ նույն մեթոդաբանությամբ Ադրբեջանի եւ Թուրքիայի հարձակողական տրամադրություններն օգտագործվում են նաեւ ՀՀ-ի եւ ԼՂՀ-ի վրա ճնշումներ բանեցնելու նպատակով. այսինքն՝ ԱՄՆ-ը եւ նրա դաշնակիցները գործում են դասական աշխարհաքաղաքականության կանոնների համաձայն:

Ակնհայտ է, որ երկրորդ դրույթի իրագործման համար անհրաժեշտ է ի դեմս ՀՀ-ի ունենալ գործունակ ռազմաքաղաքական միավոր: Միեւնույն ժամանակ, պետք է կարծել, որ ԳՀ-ի նախագծողները հստակ պատկերացում են, որ ԼՏՊ-ի եւ նրա թիմի կարողությունները բարձր չեն, եւ նրանք կարող են զգալիորեն թուլացնել ՀՀ-ն, իսկ նման երկիրը որպես լուրջ գործոն չի կարող հանդես գալ երկրորդ դրույթի համատեքստում:

Այսպիսով, որպես վարկած, կարելի է ընդունել, թե ԳՀ-ի հեղինակները հետապնդում էին հետեւյալ նպատակը. պահպանել ներկայիս գործունակ եւ անհրաժեշտ հակաթուրքական (հակաադրբեջանական) ուղղվածություն ունեցող իշխանությունը, սակայն վերջիններիս թուլացնել եւ իրենցից ավելի «կախյալ» դարձնել:

Չետընտրական գործընթացներից, ըստ մեզ, հետեւում է, որ Լ. Տեր-Պետրոսյանը մինչեւ ինչ-որ պահ համոզված էր, թե ԳՀ հեղինակները պետք է սատարեն իրեն՝ մինչեւ իր վերջնական հաղթանակ: Սակայն դատելի չունեցավ<sup>2</sup>, եւ ներկայիս արտաքին ճնշումներն ուղղված են գլխավորապես ՀՀ իշխանությունների դեմ եւ ոչ թե հօգուտ Լ. Տեր-Պետրոսյանի (ընտրությունների արդյունքները կարծես թե ոչ մեկի կողմից կասկածի տակ չեն դրվում): Այսօր արեւմտյան քաղաքական շրջանակների հիմնական «մտահոգությունը» իշխանությունների ուժային գործողություններն են եւ դրանց հետեւանքները, որոնց համատեքստում էլ ճնշումներ են կիրառվում ՀՀ իշխանությունների վրա: Դրան զուգահեռ, ԳՀ-ի հեղինակները փորձելու են առավելագույնս օգտագործել առաջին նախագահի հրահրած շարժումը՝ որպես ՀՀ իշխանությունների վրա ներազդելու շարունակական գործոն:

### **«Հողմաղացներ կառուցելու» ժամանակը**

Վերոնշյալի առիթով հարկ է նկատել, որ ցանկացած հասարակական-քաղաքական շարժումների հետագա զարգացումների կանխատեսումը, փոփոխականների թվի շատ մեծ լինելու պատճառով, խիստ դժվար է անգամ ռազմավարական մտածողության հարուստ ավանդույթներ ունեցող ԱՄՆ-ի եւ նրա դաշնակիցների համար: Չետագա զարգացումների առումով, անկասկած, որոշիչ դերակատարում պետք է ունենա հայաստանյան պետական-քաղաքական ընտրանին: Այս վերջինի համատեքստում, թերեւս, օգտակար է մտաբերել Պեկինի Տյանանմեն հրապարակում տեղի ունեցածը:

Ինչպես հայտնի է, 1989թ. չինական իշխանությունները դաժանաբար ցրեցին (2600 ցուցարար զոհվեցին) Պեկինի Տյանանմեն հրապարակում

շարունակաբար ընթացող ուսանողության զանգվածային հանրահավաքը: Ուսանողները համակարգային փոփոխություններ էին պահանջում... Առաջատար վերլուծաբանների մի զգալի մասը համոզված է, որ 90-ականների սկզբին սկսված եւ առայսօր շարունակվող Չինաստանի սրընթաց վերելքը մեծ չափով պայմանավորված է այն եռանդուն բարեփոխումներով, որոնք հետեւեցին Տյանանմենի դրամատիկ իրադարձություններին: Չինական քաղաքական ընտրանին կարողացավ երիտասարդության կուտակված դժգոհության ապակառուցողական, հանրահավաքային եռանդը վերածել կառուցողականի: Այսպիսով, ՉԺՅ-ում գործնական հարթությունում իրագործվեց ազգային անվտանգության համակարգի այն հայտնի թեզը, որը չինական մեկնաբանությամբ հնչում է մոտավորապես այսպես. «Երբ փչում է ուժեղ հողմը, ոչ միայն վրաններ պատռաստիր, այլեւ հողմաղացներ կառուցիր...»:

---

<sup>1</sup> Բնորոշ է, որ այդ ուսումնասիրություններում գրեթե չի դիտարկվում արտաքին գործոնի դերը, ինչը գիտամեթոդական տեսանկյունից խիստ խոցելի է դարձնում նման հետազոտությունները: Սակայն պետք է կարծել, որ արտաքին դերակատարման չափը եւ ձեւերը մշակվում են այլ (առաջին հերթին՝ տեղեկատվական-հոգեբանական գործողությունների ոլորտի) մասնագետների կողմից, եւ այդ մշակումները հրապարակման ենթակա չեն:

<sup>2</sup> Այս հանգամանքը, կարելի է կարծել, անակնկալ էր առաջին նախագահի համար: Նկատենք, սակայն, որ անուղղակիորեն այս վարկածի օգտին են խոսում նրա հողվածներն ամերիկյան մամուլում, որտեղ Լ. Տեր-Պետրոսյանը փաստորեն կշտամբում է արեւմտյան երկրների ղեկավարությանը ժողովրդավարության սկզբունքներից հետ կանգնելու մեջ:

**ԾՊՏՅԱԼ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐ**  
**ԹՈՒՐՔԻԱՅԻ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**  
**Ռուբեն Մելքոնյան**

2008թ. փետրվարին Թուրքիայի խորհրդարանն ընդունեց օրինագիծ բարձրագույն ուսումնական հաստատություններում մահմեդական գլխաշոր կրելու արգելքը վերացնելու մասին՝ փոփոխություններ կատարելով երկրի սահմանադրության համապատասխան հոդվածներում: Օրենքի փոփոխությունը վավերացրեց նաև Թուրքիայի նախագահ Աբդուլահ Գյուլը, եւ այն մտավ շրջանառության մեջ:

Սակայն իշխող Արդարություն եւ զարգացում կուսակցության այս նախաձեռնությունն առաջ բերեց նաև ընդդեմ կարծիքներ. հայտնի քաղաքական, մշակութային գործիչներ հանդես եկան դրա խիստ քննադատությամբ: Այս բողոքի ալիքին ակտիվորեն մասնակցեցին նաև մի շարք համալսարաններ, որոնց ռեկտորները, հանդես գալով քեմալականության սկզբունքների պաշտպանության դիրքերից, խիստ դեմ արտահայտվեցին նշյալ փոփոխություններին: Ռեկտորների այս քայլն արժանացավ իշխանության, ինչպես նաև իշխանամետ լրատվամիջոցների բուռն քննադատությամբ:

Կարծում ենք, հենց այս համատեքստում պետք է դիտարկել մարտի սկզբին համալսարանական լուրերի կայքէջի տարածած տեղեկատվությունը, համաձայն որի՝ Թուրքիայում 22 ծպտյալ քրիստոնյա ռեկտորներ եւ դեկաններ կան, որոնց մեծ մասն ունի հայկական ծագում: Ըստ այդ աղբյուրի, Թուրքիայի ծպտյալ քրիստոնյաների մի մասն ընդգրկված է քաղաքականության, բիզնեսի, պետական ծառայության համակարգում, սակայն ամենագալի տեղը նրանք կարողացել են զբաղեցնել կրթության ոլորտում եւ թաքցնելով իրենց իրական կրոնը՝ հասել են դեկանի, ռեկտորի պաշտոնի:

Պետք է ասել, որ արդեն տեւական ժամանակ է, ինչ տարբեր մակարդակի թուրք պաշտոնյաներ, գիտնականներ խոսում են Թուրքիայում ապրող ծպտյալ, իսլամացված կամ էլ հայկական ծագում ունեցող մարդկանց՝ պետական տարբեր օղակներում աշխատելու մասին: Բոլորովին վերջերս թուրքական մամուլում այդ խնդրի մասին արտահայտվեց եւ իր մտահոգությունը հայտնեց Թուրքիայում ծպտյալ քրիստոնյաների եւ կրիպտո հրեաների խնդրով բավական շատ հրապարակումների եւ

գրքերի հեղինակ Մեհմեդ Շելքեթ Էյզին: Այսպես, խոսելով համալսարանական լուրեր պատրաստող կայքէջի վերը նշված տվյալների մասին՝ նա մեջբերեց Պոլսո Չայոց պատրիարք Մեսրոպ Մուֆաֆյանի՝ Փարիզի «La Croix» օրաթերթի 2005թ. օգոստոսի 29-ի համարում տպագրված այն միտքը, թե Թուրքիայում ներկայումս մոտավորապես 1.5 միլիոն հայկական արմատներով թուրք եւ մուսուլման կա: Պատրիարքն ավելացրել է նաեւ, որ ամեն տարի հայկական ծագումով շուրջ 60 մուսուլմաններ, դիմելով պատրիարքարան, վերադառնում են քրիստոնեության: Ըստ Էյզիի, ինքը դեմ չէ, որ հայերը լինեն ռեկտոր կամ դեկան, սակայն նրանք պետք է ծպտյալ չլինեն եւ չունենան երկու ինքնություն: Նա պնդում է, որ Թուրքիայում կա նաեւ կրիպտո հրեաների խնդիրը, որոնց թիվը շուրջ 1.5 միլիոն է: Իսկ խոսելով ծպտյալ հույների մասին՝ Էյզին բերում է թուրքական Բողազիչի համալսարանի պրոֆեսորներից Դեմիր Դեմիրգիլի օրինակը: Էյզին կարծիք է հայտնում նաեւ, որ ներկայումս հենց տարատեսակ ծպտյալներն են գլխաշորի արգելքը վերացնելուն դեմ արտահայտվողները եւ կոչ է անում մանրամասն ուսումնասիրել այս խնդիրը:

Նշենք, որ Թուրքիայի բուհական համակարգում ծպտյալ հայերի կամ հայկական ծագում ունեցողների թեման բուռն քննարկումների արժանացավ դեռեւս 2005թ., երբ քրեական գործ հարուցվեց Վանի «Չարյուրերորդ տարի» համալսարանի ռեկտոր Յուջել Աշքընի դեմ: 2005թ. հունիսի 10-ին թուրքական «Վաքիթ» թերթում տպագրվեց մի հոդված, որում ասվում էր, թե Յուջել Աշքընի պապը հայազգի Չակոբ Վարդոյանն է, որը հետագայում ընդունել է իսլամ: Վերոհիշյալ Չակոբ Վարդոյանը (1840-1902) հայտնի հայ թատերական գործիչ է, որը զգալի ավանդ ունի օսմանյան թատրոնի կայացման գործում: Թուրք հայտնի մշակութաբան Մեթին Անդը իր «Օսմանյան թատրոնը» ուսումնասիրության մեջ մեծ ակնածանքով է խոսում Չակոբ Վարդոյանի մասին՝ համարելով նրան «թուրքական թատրոնի պատմության մեջ շատ կարեւոր մի անձ» եւ նույնիսկ կարծում, որ իր վաստակով նա արժանի է իր արձանը կանգնեցնելուն: Ինչպես նշված է տարբեր աղբյուրներում, Չակոբ Վարդոյանն իրոք հետագայում իսլամ է ընդունել եւ փոխել անունը՝ դառնալով Մեհմեթ Յաքուփ, սակայն նա ավելի հայտնի է Գյուլլու Ազոփ անվամբ, որ Չակոբ Վարդոյան անվան ուղղակի թարգմանությունն է թուրքերեն:

Ռեկտոր Յուջել Աշքընի հայրը՝ Նեջիփ Աշքընը, այսինքն՝ Չակոբ Վարդոյանի որդին, նույնպես արվեստագետ է եւ համարվում է Թուրքիայի ամենահայտնի ջութակահարներից մեկը: Ի տարբերություն իր

հոր եւ պապի, Յուզել Աշքընը ընտրում է գիտության ուղին՝ հասնելով դոկտոր-պրոֆեսորի աստիճանի: 1995թ. նա ընտրվում է Վանի «Հարյուրերորդ տարի» համալսարանի գյուղատնտեսության ֆակուլտետի դեկան, իսկ 1999թ.՝ նույն համալսարանի ռեկտոր: Ի դեպ, երբ թուրքական մամուլում բուռն կերպով շարունակվում էին Յուզել Աշքընի ծագման մասին քննարկումները, նա բացահայտ հայտարարեց հետեւյալը. «Ես հպարտ եմ, որ Հակոբի թոռն եմ: Պապս՝ Հակոբ Վարդովյանը, հետագայում իսլամ ընդունելով վերցրել է Յաքուփ անունը: Պապս հայ էր, սակայն ես թուրք եմ, Թուրքիայի քաղաքացի: Ինքս ինձ երբեք հայկական համայնքի անդամ չեմ համարել: Իսկ 1915-ի դեպքերը, ըստ իս, մարդկային ողբերգություն են»: Այս, ինչ-որ տեղ՝ խոստովանական, հայտարարությունից հետո նա շարունակեց մնալ որպես թուրքական մամուլի եւ տարբեր շրջանակների թիրախ, իսկ ոմանք նույնիսկ կարծիք հայտնեցին, որ Յուզել Աշքընը պատահաբար չի ընտրել հատկապես Վանի համալսարանը՝ դա կապելով քաղաքի նախկինում հայկական լինելու հանգամանքի հետ: Բացի այդ, նշվում է, որ ռեկտոր Աշքընը ունի հին պատմական իրեր հավաքելու նախասիրություն, եւ նրա հավաքածուի առարկաների մեծ մասն ունի խաչի խորհրդանիշ:

Ըստ տարբեր աղբյուրների՝ հայկական ծագում ունի եւ մինչեւ այժմ էլ քրիստոնյա է «Սեպտեմբերի 9-ի համալսարանի» ռեկտոր, դոկտոր-պրոֆեսոր Էմին Ալըջըն: Նրա տոհմածառի մանրամասն ուսումնասիրությունը պարզել է, որ հոր անունը Մանուֆեր է, սակայն պապերից մեկի անունը Յովհաննես է, իսկ մյուսինը՝ Արթին (Հարություն): Նույն «Վաքիթ» թերթում լուր էր տպագրվել, որ «Սեպտեմբերի 9-ի համալսարանի» ռեկտոր Էմին Ալըջընի ընտանիքը ծագումով Մալաթիայից է (Սալքյուփյոյու գյուղից), եւ նրանք մինչեւ այժմ էլ սերտ կապեր են պահպանում Իզմիրում բնակվող իրենց հայ ազգականների հետ: Ուշագրավ է նաեւ, որ Էմին Ալըջընի երկու եղբայրները՝ 1946թ. ծնված Իբրահիմ Ալըջըն եւ 1956թ. ծնված Ազիզ Ալըջըն, Թուրքիայի նախարարների խորհրդի որոշմամբ (համապատասխանաբար՝ 1988 եւ 1989 թվականներին) զրկվել են քաղաքացիությունից: Որպես դրա պատճառ է համարվել նրանց «ոչ վստահելի լինելը», իսկ թուրքական «Վաքիթ» թերթը պնդում է, որ նրանք գործել են Թուրքիայի դեմ՝ ակտիվորեն համագործակցելով հայկական ուժերի հետ: Այժմ Ալըջընի երկու եղբայրներն էլ ապրում են Վիեննայում: Հետաքրքիր է, որ ռեկտոր Էմին Ալըջըն եւս, Վանի ռեկտոր Յուզել Աշքընի նման, իր կրոնական եւ էթնիկ պատկանելության շուրջ ծավալված քննարկումների ժամանակ արեց ինքնախոստովանական հայտարարություն՝ ասելով. «Ես քրիստոնյա եմ», ավելացնելով, թե ինքը լավ

գիտակցում է, որ իր հայտարարության հետեւանքները շատ վատ են լինելու: Նա պնդել է, որ Թուրքիան աշխարհիկ երկիր է, եւ ամեն ոք ունի կրոնի ու դավանանքի ազատության իրավունք: Սակայն, ընդունելով իր քրիստոնյա լինելը՝ նա կտրականապես ժխտում է հայ լինելու մասին պնդումները, իսկ լրագրողների բերած փաստարկներն իր տոհմածառի եւ մասնավորապես պապերի հայկական անուններ ունենալու վերաբերյալ՝ անպատասխան թողնում:

Այսպիսով, տեսնում ենք, որ այսօր էլ Թուրքիայում կիրառվում է բացահայտ էթնիկ եւ կրոնական խտրականություն: Ավելին, անհրաժեշտության դեպքում պետական մարմինները բացահայտում եւ շրջանառության մեջ են դնում մարդկանց՝ հարկադրանքի տակ ստիպողաբար թաքցրած իրական էթնիկ եւ կրոնական պատկանելությունը եւ դրա միջոցով իրականացնում ճնշումներ, ընդ որում, ինչպես պետական մեքենայի, այնպես էլ հասարակության միջոցով: Իսկ վերոնշյալ Սեհմեթ Էյզիի այն պնդումը, թե հայերը կամ քրիստոնյաներն առանց իրենց էթնիկ եւ կրոնական ինքնությունը թաքցնելու կարող են ցանկացած պաշտոն զբաղեցնել Թուրքիայում, բացահայտ դեմագոգիա է: Բավական է հպանցիկ հայացք նետել հանրապետական Թուրքիայի պատմությանը, եւ կտեսնենք, որ պետական ապարատում, զինվորական համակարգում ոչ մի բացահայտ հայ չի հասել բարձր պաշտոնի: Արդյունքում՝ ձեւավորվել է ծպտյալների մի նոր խումբ, որն այդ քայլին դիմել է արդեն ոչ թե ցեղասպանությունից փրկվելու (ինչպես դարասկզբին), այլ հանրապետական Թուրքիայում գոյատեւելու համար:



## ՀԱՎԱՆԱԲԱՐ ԵՍ ՀԱՅ ԵՄ...

Ինչպես բազմիցս նշվել է, թուրքական հասարակության այսօրվա կարեւոր խնդիրներից է, այսպես կոչված, «ինքնության ճգնաժամը»: Թուրքիայում տարբեր ժամանակաշրջաններում ձուլման ենթարկված մարդիկ եւ նրանց սերունդները սկսում են լուրջ կասկածներ ունենալ իրենց էթնիկ պատկանելության վերաբերյալ, որը հետզհետե խորանալով վերածվում է ճգնաժամի: Այս առումով բավական հետաքրքիր են անգլիական եւ գերմանական մասնագետների հետազոտության արդյունքները, համաձայն որոնց՝ Թուրքիայի բնակչության 38-40 տոկոսը իրեն թուրք չի համարում: «Ինքնության ճգնաժամը» ունի զարգացման եւ հանգուցալուծման տարբեր ուղիներ, որոնք շատ հաճախ կապված են լինում ինչպես կոնկրետ անձի, այնպես էլ նրան շրջապատող միջավայրի եւ հանգամանքների հետ: Այս մասին տեսական հարթության մեջ շատ է խոսվում, եւ հետաքրքիր կլինի տեսնել այդ ամենի գործնական արտահայտումը կոնկրետ անձանց օրինակի վրա: Այսպես, Թուրքիայում բավական հայտնի երգիչ-երգահան **Յաշար Քուրթը** Ստամբուլի «Ակոս» շաբաթաթերթի 2008թ. փետրվարի 29-ի համարում տված հարցազրույցում խոսել է իր վերագտած հայկական ինքնության մասին: Հետաքրքիր է, որ դրանում զգալի է եղել երգիչ Արտո Թունչբոյաջյանի եւ Armenian Navy Band-ի հետ նրա ծանոթությունն ու համագործակցությունը: Հարցազրույցում Յաշար Քուրթը իր էթնիկ ինքնության վերաբերյալ մտորումներն արտահայտում է հետեւյալ ինքնախոստովանական հայտարարությամբ. «Հավանաբար ես հայ եմ...»: Ստորեւ թարգմանաբար եւ որոշ կրճատումներով ներկայացնում ենք հիշյալ հարցազրույցը:

**Ռ. Մ.**

Հարց – Կարո՞ղ եք պատմել, թե ինչպես է տեղի ունեցել այս բացահայտումը:

Պատ.– Ես ծնվել, մեծացել եմ Ստամբուլում, իսկ ընտանիքս Ռիզեից է: Երբեք ինքներս մեզ չենք հարցրել, թե ովքեր ենք մենք: Սակայն սրանով հանդերձ մանկությունից ի վեր զգում էի, որ ինչ-որ տարբերություն ունենք: Սկզբում կարծում էի, թե միգրացի վրացի ենք: Երբ հորս հարցնում էի, թե

մեր նախնիները որտեղից են Անատոլիա եկել, ասում էր՝ Բաթունից: Միգրացե շատ առաջներում կարող է Բաթունից եկած լինեինք, սակայն երբեմն ներընտանեկան խոսակցությունների մեջ Վան անունն էր հոլովվում: Հայրս հարցերիս պատասխանում էր՝ ասելով. «Մենք թուրք ենք»: Սակայն ես սա ընկալում էի ոչ թե որպես գենետիկ կապ, այլ ավելի շատ որպես մշակութային պատկանելության հարց: Եվ ի վերջո, եթե Ասիայից էինք եկել, ապա ինչու շեղաչք չէինք: Հետո մի օր Արտոյի հետ ժամոթացա եւ սկսեցի խոսել նրա հետ: Ինձ պատմեց, թե ինչ է նշանակում Թուրքիայում հայ լինելը: Գրեթե շոկ ապրեցի: Արտոն այստեղացի է, գրեթե քսան տարի Ամերիկայում ապրած, սակայն ամերիկացի չդարձած մեկն է: Իսկ ես երկար ժամանակ Գերմանիայում եմ ապրել եւ այս խնդիրներից բոլորովին հեռու էի: Այդ ընթացքում ընտանիքիս անդամների եւ նրանց կյանքի հանդեպ հայացքս փոխվեց:

*Հարց*– Մեկի համար, ով իրեն առնվազն մինչեւ այս տարիքը թուրք է համարել, օրինակ՝ քեզ համար, այս ամենն ի՞նչ զգացում է առաջացնում. ամոթ, զայրույթ:

*Պատ.*– Այդ բոլորն էլ զգում ես՝ ե՛ւ ամոթ, ե՛ւ զայրույթ, ե՛ւ խուճապ... Պատճառահետեւանքային կապերի հարցում եթե գործնական հմտություններ ունես, ապա ասում ես՝ ինչպե՞ս է այս ամենն աչքիցս վրիպել կամ ինչպե՞ս է եղել, որ մի ամբողջ հասարակության աչքից է վրիպել: Բացի այդ, ինչո՞ւ է այդ հարցն այդքան կարեւոր: Իմ արմատներում հայկականություն ունենալը կամ չունենալը ի՞նչը պետք է փոխի:

*Հարց*– Արդյոք, քեզ համակե՞լ է այն զգացումը, որ իրոք հայկական արմատներ ունես:

*Պատ.*– Ամիսներով մտածում էի, թե ինչ պետք է ասեմ, ինչպես պետք է մտածեմ, որ ոչ մեկին վնաս չպատճառեմ: Ինձ ասում էին. «Կտուժես, նույնիսկ կյանքդ կվտանգվի»: «Ուրեմն անպայման պետք է այդ քայլը անեմ», - ասացի ինքս ինձ: Ասեմ, որ այս հարցազրույցն էլ է ինձ շատ մտածելու տեղիք տվել: Այս պահին ամենահստակ բանը, որ կարող եմ ասել, հետեւյալն է. ես ցանկանում եմ հայերին ճանաչել, ի՞նչ են ուտում, ի՞նչ են խմում, ինչպե՞ս են ապրում, աշխարհին ինչպե՞ս են մայում: Ինձ համար նոր մի աշխարհ է: Ուզում եմ հայերեն սովորել, Հայաստան ավելի շատ գնալ-գալ:

*Չարք* – Երբեւէ Վան գնացե՞լ ես:

*Պատ.* – Մի օր ընտանիքի տարեց անդամներից մեկին հարցրի, թե որտեղից ենք եկել Սեւ ծով: Ասաց, որ Վանի Բերկրի գյուղից Իսմայիլ անունով մի երեխա 1800-ականների վերջին Սեւ ծովում մի ընտանիքի մոտ է ապաստանել: 19 տարեկանում նա վարակվել է թոքախտով, եւ լեռան վրա ապրող մի մարդ, ասելով, որ կարող է ապաքինել հիվանդությունը, երիտասարդին իր տուն է տարել: Իրականում էլ Իսմայիլի առողջությունը վերականգնվել է, ավելին՝ ամուսնացել է այդ մարդու աղջկա հետ եւ չորս տղա ունեցել: Սրանցից մեկը հորս պապն է եղել: Ես պապերիս չեմ տեսել, սակայն հորս հոր մահը ինձ միշտ կասկածելի է թվացել: Անտառում ծառ կտրելիս կեռասի ծառի տակ մնալով մահացել է: Նրա եղբոր համար էլ են նույնը ասում: Տարօրինակ մեկ այլ փաստն էլ այն է, որ մենք Սեւ ծովում ոչ մի ունեցվածք չունենք: Երբ այսպիսի հարցականները շատացան, գնացի հորեղբորս մոտ: Ըստ նրա պատմածի, մենք Վանի Մուրաթլը գավառում բնակվող մի ցեղ ենք եղել: Օսմանցիների հետ մեր հարաբերությունները վատացել են, եւ տեղափոխվել ենք Սեւ ծով, որը Վանից հեռու է: Ուրքով են ճանապարհը կտրել սարերի միջով, եւ այս ընթացքում ժողովուրդը ճանապարհին կոտորվել է: Այսինքն՝ իմ ընտանիքի պատմությունը մի վարկյանում փոխվեց՝ Իսմայիլից հասնելով օսմանցիներին... Չետո իմացա, որ Մուրաթլըն այդ ժամանակ կոչվել է Բերկրի եւ որ ամբողջ աքսորը այս գավառի տարածքով է անցել:

*Չարք* – Ինքնությանդ հետ կապված այսպիսի բացահայտում անելով՝ իրականում մեջտեղ ես հանում քո ամբողջ ընտանիքին առնչվող մի իրականություն: Եվ հնարավոր չէ միայն քո համար պատասխանատու լինել. ինչպիսին է եղել քո ընտանիքի արձագանքը:

*Պատ.* – Բացասական արձագանք երբեք չի եղել: Միայն ասացին, թե որտեղի՞ց են իմացել եւ ավելացրին. «Եթե նույնիսկ այդպես է, մեզ համար արդեն ոչ մի բան չի փոխվի»: Ի վերջո, բոլորն ունեն ընտանիք, ստեղծած մի աշխարհ: Սակայն, իմ կարծիքով, դրանից հետո մի տեսակ հանգստացան:

*Չարք* – Պետք է որ հեշտ չլինի մարդուն՝ իր ինքնության հետ կապված պատմությանը մեկ նախադասություն եւս ավելացնել: Սրանից հետո ի՞նչ ես անելու: Կամ մեկը, ով իմացել է, թե հայ է, ի՞նչ պետք է անի:

*Պատ.* – Ես հիմա իմ ինքնության մեջ փոքր մի անցք եմ բացել եւ խոսում եմ ավելի շատ իմ անունից: Մի դուռ կա, որը բացել ես, սակայն չես

կարողանում մտնել: Այնտեղ մի անջրպետ կա: Միգուցե երգերիս թեմաները փոխվեն: Ես քառասուն տարեկան եմ եւ նոր ինքնությունս յուրացնելու համար շատ ժամանակ չունեմ, սակայն կամաց-կամաց սկսում եմ որոշ բաներ օգտագործել: Օրինակ, երբ *Armenian Navy Band*-ի համար թուրքիայում թարգմանություն էի անում, շատ տարօրինակ մի բան եղավ: Խանութներից մեկում մի մարդ հարցրեց. «Ընկերները որտեղի՞ց են»: Երբ ես ասացի՝ Հայաստանից, նա հարցրեց. «Դո՞ւ էլ ես հայ»: Այս հարցը ինձ առաջին անգամ էր տրվում, եւ ես պատասխանեցի. «Այո, հայ եմ»...

Թուրքերենից թարգմանեց  
Ռուբեն Մելքոնյանը

## **ՋԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԻՐԱՆԻ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՇՈՒՐՋ ՍԵՒԱԿ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ**

*Մարտի 3-ին ՄԱԿ ԱԽ-ը ընդունեց Իրանի միջուկային ծրագրին վերաբերող երրորդ բանաձեւը, որը ՄԱԿ ԱԽ մշտական հինգ անդամների միջեւ Իրանի միջուկային հիմնախնդրի կարգավորման շուրջ ընթացող քննարկումների բնական արդյունքը հանդիսացավ: Թեեւ ԱԽ ընդունած փաստաթուղթն առավել քան հավասարակշռված էր, այն Իրանի միջուկային ծրագրի շուրջ զարգացումներում նոր որակական սկիզբ է նախանշում եւ հիմք ստեղծում հետագայում կոշտ պատժամիջոցների կիրառման համար:*

Փետրվարին ՄԱԿ ԱԽ-ում միջուկային հիմնախնդրի շուրջ ծավալված քննարկումներն Իրանի համար կարելուք նշանակություն ունեին ոչ միայն բուն միջուկային ծրագրի իրականացման հեռանկարների, այլեւ ներքաղաքական զարգացումների առումով: Խորհրդարանական ընտրություններն Իրանում, որոնք ավարտվեցին մարտի 14-ին, հստակ ազդեցություն էին թողել Իրանի վերջին ամիսների ներքին եւ արտաքին քաղաքականության վրա: Միաժամանակ, հաշվի առնելով այն փաստը, որ միջուկային հիմնախնդրի շուրջ ընթացող զարգացումները լայն քննարկման եւ գնահատման առարկա են իրանական հասարակությունում, թե՛ ՄԱԿ ԱԽ ընդունած փաստաթուղթը, թե՛ իրանական քաղաքական ուժերի դիրքորոշումը միջուկային հիմնախնդրի շուրջ դարձան նախընտրական պայքարի վրա ազդեցություն գործող կարելուք գործոններ:

### ***ԱԵՄԳ գլխավոր տնօրեն Էլ-Բարադեյի զեկույցը եւ Իրանի արձագանքը***

Փետրվարի 22-ին Ատոմային էներգիայի միջազգային գործակալության գլխավոր տնօրեն Մ.Էլ-Բարադեյի՝ Իրանի միջուկային ծրագրին նվիրված, 58 կետից բաղկացած զեկույցը հիմք հանդիսացավ մարտի 3-ին ՄԱԿ ԱԽ ընդունած բանաձեւի համար: Ձեկույցում չկար տեղեկատվություն այն մասին, թե Իրանում արդյոք կա միջուկային զենքի ստեղծման ծրագիր, բայց նշվում էր, որ պաշտոնական Թեհրանը չի կատարում

ՄԱԿ ԱԽ պահանջները՝ դադարեցնել ուրանի հարստացումը, այլ, ընդհակառակը, սկսել է ուրանի հարստացմանն ուղղված՝ նոր սերնդի ցեմտրիֆուգների մշակման ծրագիր: Թեև զեկույցը լի էր Իրանի միջուկային հետազոտությունների վերաբերյալ քննադատությամբ, սակայն իրանական պահպանողական ուղղվածություն ունեցող քաղաքական ուժերը նախընտրական քարոզչության ժամանակ այն ներկայացրին որպես «Իրանի հաղթանակ»: Ավելին, Իրանի հոգեւոր առաջնորդ Ա.Խամենեին հայտարարեց, թե էլ-Բարադեյի զեկույցը ոչ այլ ինչ է, եթե ոչ «Իրանի միջուկային թղթապանակի փակում»: Նույնպիսի հայտարարություններով հանդես եկան թե՛ Իրանի արտաքին գործերի նախարարությունը, թե՛ ԱԷՄԳ-ում աշխատող իրանական պատվիրակությունը:

Ակնհայտ է, որ իրանական ղեկավարությունը հստակ պատկերացնում էր, որ ԱԷՄԳ գլխավոր տնօրենի զեկույցից հետո Իրանի «միջուկային թղթապանակը» ոչ միայն չի փակվելու, այլև մեկ անգամ եւս դառնալու է ՄԱԿ ԱԽ քննարկման առարկա՝ դրանից բխող հետեւանքներով: Ա.Խամենեինի եւ իրանցի այլ գործիչների կողմից ԱԷՄԳ գլխավոր տնօրենի զեկույցի «լավատեսական գնահատականները, հավանաբար, փորձ էին արդարացնել «պահպանողականների» կոշտ արտաքին քաղաքական գծի արդյունավետությունը, ինչպես նաեւ կասեցնել նախընտրական պայքարում միջուկային խաղաթղթի օգտագործման փորձը «բարեփոխիչների» կողմից:

Ինչ վերաբերում է, այսպես կոչված, «բարեփոխիչներին», ապա նրանք թեւ երբեք էլ չեն մերժել միջուկային ծրագրի զարգացման անհրաժեշտությունը, սակայն միշտ հանդես են եկել կոշտ քաղաքականության հնարավոր բացասական հետեւանքների մասին հայտարարություններով: Հենց այս բացասական հետեւանքների դրսեւորումն են ՄԱԿ ԱԽ բանաձեւերը եւ Իրանի տնտեսական ու սոցիալական համակարգի վրա դեռեւս մեծ ազդեցություն չթողնող պատժամիջոցները: Չնայած տարեսկզբին խորհրդարանական ընտրություններում «բարեփոխիչների» հնարավոր հաղթանակի մասին գրեթե չէր խոսվում, փետրվարին նրանց դիրքերը բավական ամրապնդվեցին: Մարտի 16-ին հրապարակված խորհրդարանական ընտրությունների նախնական արդյունքների համաձայն՝ «բարեփոխիչները» ստանում են իրանական մեջլիսի տեղերի 30%-ը, ինչը բավական լավ արդյունք է:

### **ՄԱԿ ԱԽ ԲԱՆԱԾԵԼՐ**

ԱԷՄԳ գլխավոր տնօրենի զեկույցի բնական հետեւանքը դարձավ ՄԱԿ ԱԽ կողմից մարտի 3-ին ընդունված բանաձեւը: Ախ մշտական անդամների միջեւ ծավալված քննարկումների արդյունքում ընդունված փաստաթուղթը լուրջ պատժամիջոցներ է մտցնում Իրանի նկատմամբ: Նշենք դրանցից մի քանիսը.

1. Արգելվում է մի շարք իրանցիների մուտքը ՄԱԿ անդամ երկրների տարածք: Նրանց շարքում են գիտնականներ, խոշոր ձեռնարկությունների և հիմնարկությունների ղեկավարներ:

2. ՄԱԿ անդամ երկրներից պահանջվում է վերահսկել բոլոր ֆինանսական գործարքներն իրանական բանկերի և ֆինանսական կազմակերպությունների հետ: Առաջին հերթին սա վերաբերում է իրանական խոշորագույն «Մելլի» և «Սադերաթ» բանկերին:

3. Վերահսկողություն է սահմանվում դեպի Իրան և Իրանից դուրս եկող բոլոր ապրանքների և բեռների վրա («Իրան Էյր Կարգու» և «Իրան Շիփինգ Լայն» խոշորագույն ընկերությունների ինքնաթիռների և նավերի միջոցով տեղափոխվող եւն):

Բանաձեւը պահանջում է Իրանից դադարեցնել ուրանի հարստացումը և կանգնեցնել ծանր ջրով ռեակտորի կառուցման աշխատանքները, իսկ ԱԷՄԳ գլխավոր տնօրենից՝ 90 օր հետո ներկայացնել զեկույց այն մասին, թե կատարել է արդյոք իսլամական հանրապետությունը ՄԱԿ ԱԽ պահանջները:

Նշենք մի կարեւոր փաստ: Այն ժամանակ, երբ ՄԱԿ ԱԽ-ում ավարտական փուլ էին մտել Իրանին վերաբերող բանաձեւի քննարկումները, տեղի ունեցավ Իրանի նախագահ Մ.Ահմադինեժադի այցն Իրաք: Իսլամական հեղափոխությունից հետո սա Իրանի ղեկավարի առաջին այցն էր Իրաք, ինչն ինքնին կարեւոր է: Սակայն ուշագրավ է այն, որ բանաձեւի ընդունման նախօրեին Իրաք այցելած Իրանի նախագահը ԱՄՆ հասցեին մեղադրանքների մեծ տարափ ուղղեց, իսկ ամերիկյան զորքերի կողմից վերահսկվող Բաղդադում Վաշինգտոնին անվանեց հանցագործ և զավթիչ: Բավական արդարացված տպավորություն ստեղծվեց, թե Իրանի նախագահն էլ ավելի է բորբոքում կրքերը, չնայած իրանա-ամերիկյան քանիցս անցկացված բանակցությունները հենց նույն Բաղդադում որոշակի հիմք են ստեղծում երկու երկրների հարաբերությունների

մասնակի կարգավորման համար: Համաձայն հայտնի վերլուծաբան Ք.Քաթցմանի, Իրանի նախագահի նոր «բանավոր հարձակումները ԱՄՆ-ի դեմ կոչված են զուտ ներիրանական «օգտագործման» համար եւ նպատակ ունեն լուծել Մ.Ահմադինեժադի հիմնական խնդիրը՝ վերընտրվել նախագահ 2009-ին»:

ՄԱԿ ԱԽ բանաձեւի ընդունումը Իրանի քաղաքական կյանքում հետաքրքիր զարգացում ունեցավ. բանաձեւի ընդունման հենց նույն օրը Իրանի Պահապանների խորհուրդը վերանայեց իր նախկին որոշումը եւ անսպասելիորեն 300 «բարեփոխիչ» քաղաքական գործիչների, որոնց մեկ եւ կես ամիս առաջ մերժել էր թույլատրել մասնակցելու խորհրդարանական ընտրություններին, հաստատեց խորհրդարանական ընտրություններին մասնակցող թեկնածուների շարքում: Սա, հավանաբար, քայլ էր՝ ուղղված հասարակության ուշադրության շեղմանը անցանկալի արտաքին զարգացումներից, ինչպես նաեւ «վճար» բարեփոխիչներին՝ միջուկային խաղաթուղթը ներքաղաքական կյանքում չօգտագործելու համար:

Ինչեւէ, կարելի է նշել, որ ՄԱԿ ԱԽ-ի կողմից իրանական միջուկային ծրագրին վերաբերող բանաձեւի ընդունումը թե՛ բովանդակությամբ, թե՛ Իրանի ներքաղաքական կյանքի վրա ունենալիք ազդեցությամբ մեծ կարեւորություն ներկայացնող իրադարձություն է: Իրանի ղեկավարությունը բանաձեւի ընդունումից հետո արդեն հայտարարել է, որ չի պատրաստվում կասեցնել ուրանի հարստացման աշխատանքները, ինչը վկայում է, որ արդեն հունիսին Իրանի միջուկային ծրագիրը կրկին կհայտնվի ՄԱԿ ԱԽ-ում, եւ հնարավոր է՝ կընդունվեն նոր պատժամիջոցներ:



**ԱՄՆ – ԹՈՒՐՔՄԵՆՍՏԱՆ – ԱԴՐԲԵՋԱՆ.  
ԷՆԵՐԳԵՏԻԿ ԶԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՁԵՎԱԶՎՓ  
Բազրատ Սարուխանյան**

Վերջին ամիսներին նկատվում է ԱՄՆ դիրքերի ամրապնդման գործընթաց Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում: Խոսքն, առաջին հերթին, ԱՄՆ-ի եւ Թուրքմենստանի հարաբերությունների ամրապնդման մասին է էներգետիկ եւ քաղաքական ոլորտներում: Այս գործընթացից զերծ չի մնում նաեւ Ադրբեջանը, որն ակտիվորեն փորձում է Թուրքմենստանին ներքաշել իր մասնակցությամբ իրականացվող էներգետիկ նախագծերի մեջ:

**Չամագործակցության խորացման առաջին նշանները**

Թուրքմենա-ամերիկյան հարաբերությունների խորացման առաջին նշաններն ի հայտ եկան անցած տարվա ամռանը: 2007թ. հունիսի 20-ին Ազգաբաղ ժամանեց ԱՄՆ Կենտրոնական հրամանատարության գլխավոր հրամանատար, ծովակալ Վ.Ֆալոնին: Թուրքմենստանի նախագահը եւ ԱՄՆ ռազմական հրամանատարը քննարկեցին տարածաշրջանային անվտանգությանը, այդ թվում՝ նաեւ էներգետիկ ոլորտին վերաբերող հարցեր: Նշենք, որ հունիսի 10-ին Սանկտ Պետերբուրգում ԱՊՅ ոչ պաշտոնական գագաթաժողովի շրջանակներում տեղի էր ունեցել Թուրքմենստանի եւ Ադրբեջանի նախագահների առաջին հանդիպումը 5-ամյա ընդմիջումից հետո, որի ընթացքում որոշում էր կայացվել վերականգնել Թուրքմենստանի դեսպանության աշխատանքները Բաքվում: Վ.Ֆալոնիի՝ Թուրքմենստան կատարած այցից ընդամենը հինգ օր հետո Ազգաբաղ է ժամանում Չարավային եւ Կենտրոնական Ասիայի գծով ԱՄՆ պետքարտուղարի օգնականի տեղակալ Է.Ֆեյզենբաումը: Ամերիկյան դիվանագետի հետ հանդիպման ժամանակ Թուրքմենստանի նախագահ Գ.Բերդիմուհամեդովը հայտարարել է, որ իր կառավարությանը բավական լուրջ է վերաբերվում Անդրկասպյան գազատարին միանալու հեռանկարին, որի իրականացման պայմաններում Թուրքմենստանը հնարավորություն կստանա Ադրբեջանի, Վրաստանի եւ Թուրքիայի տարածքով դուրս գալ ԵՄ գազի շուկա:

Նույն հունիսին ԱՄՆ բարձրաստիճան մի շարք դիվանագետներ

այցելություններ կատարեցին Ադրբեջան, որոնցից, թերևս, ամենակարևորը Ազգային անվտանգության գծով ԱՄՆ պետքարտուղարի օգնականի տեղակալ Ջ.Վուդի այցելությունն էր: Վերջինիս եւ Ադրբեջանի արդյունաբերության ու էներգետիկայի նախարար Ն.Ալիեւի հանդիպման ժամանակ ամերիկյան դիվանագետը հայտարարեց, որ ԱՄՆ ազգային շահերի համար կարևորագույն նշանակություն ունի Կենտրոնական Ասիայի երկրների եւ, առաջին հերթին, Թուրքմենստանի ու Ղազախստանի ներգրավումը տարածաշրջանային էներգետիկ նախագծերի իրականացմանը:

### **Մերձեցման խորացում**

2008թ. տարեսկզբին ակնհայտ դարձավ, որ Թուրքմենստանի՝ Ադրբեջանի եւ ԱՄՆ-ի հետ հարաբերությունների բարելավումը ռազմավարական եւ երկարաժամկետ բնույթ է կրում: Թուրքմենստանի ղեկավարության՝ Իրանի հետ էներգետիկ համագործակցության ոլորտում հրահրած ճգնաժամը հանգեցրեց Իրան-Թուրքմենստան հարաբերությունների կտրուկ վատթարացման: Նշենք, որ Իրանը մինչեւ վերջերս Թուրքմենստանի միակ ոչ ռուսական դարպասն էր՝ Թուրքիա եւ ԵՄ գազ արտահանելու տեսանկյունից: Վերջին տարիներին եվրոպական եւ ամերիկյան էներգետիկ քաղաքականության ոլորտում աշխատող վերլուծաբանների մեծ մասը հակված էր այն կարծիքին, որ թուրքմենական գազի ԵՄ արտահանման միակ հնարավոր ճանապարհը հենց Իրանն է: Սակայն 2008-ի տարեսկզբին թուրքմենական իշխանությունները կարծես թե գիտակցաբար գնում են Թեհրանի հետ հարաբերությունների կտրուկ վատթարացման: Միակ բացատրությունը, հավանաբար, այն է, որ 2007թ. կեսերից սկսած՝ Թուրքմենստան-Ադրբեջան եւ Թուրքմենստան-ԱՄՆ հարաբերությունների ջերմացումն իրական տեսք եւ հեռանկարներ է ստանում, ինչը, հնարավոր է, կբերի Թուրքմենստանի միացմանը Անդրկասպյան գազատարի կառուցման նախագծին:

Հունվարի 17-ին Ազգաբաղում իր առաջին աշխատանքային հանդիպումն անցկացրեց նորաստեղծ թուրքմենա-ադրբեջանական միջպետական տնտեսական համագործակցության հանձնաժողովը: Հանձնաժողովի ադրբեջանցի համանախագահ, Ադրբեջանի փոխվարչապետ Յ.Ջյուբովի հետ հանդիպման ժամանակ Թուրքմենստանի նախագահը մեկ անգամ եւս նշեց, որ լուրջ ակնկալիքներ ունի Հարավային Կովկասում իրականացվող էներգետիկ նախագծերին իր երկրի մասնակցության հետ կապված: Իսկ փետրվարի 13-ին ԱՄՆ պետքարտուղար Ք.Ռայսը հայտարարեց,

որ ԱՄՆ Պետքարտուղարությունում ստեղծվելու է նոր էներգետիկ դիվանագիտության համակարգողի բարձրաստիճան հաստիք: Պետդեպարտամենտի նոր աշխատակիցը պետք է իր ուշադրությունը կենտրոնացնի Կասպից ծովի եւ Կենտրոնական Ասիայի տարածաշրջանների վրա, որտեղ նկատվում է ռուսական ազդեցության որոշակի աճ:

Նշենք, որ Սենատում անցկացվող լսումների ժամանակ նոր հաստիքի ստեղծման պահանջով հանդես եկավ սենատոր Ռ.Լուգարը: Նա հայտարարեց, թե ուշադրության պակասի դեպքում ԱՄՆ-ը կարող է հավիտենապես կորցնել Կենտրոնական Ասիան: Փետրվարի 15-ին էներգետիկ դիվանագիտության համակարգողի պաշտոնում նշանակվեց Ս.Մանը, որը ժամանակին նշանակալից դեր է խաղացել Բաքու–Թբիլիսի–Ջեյհան նավթատարի ծրագրի իրականացման գործում: Իսկ փետրվարի 28-ին Ս.Մանը պաշտոնական այցով ժամանեց Թուրքմենստան եւ հանդիպում ունեցավ երկրի նախագահի հետ: Հանդիպման հիմնական արդյունքներ կարելի է համարել.

- ❖ Ս.Մանը հայտարարեց, թե պաշտոնապես թուրքմենական ղեկավարությանն է փոխանցում ԱՄՆ առաջատար նավթային ընկերությունների պատրաստակամությունը՝ մասնակցել թուրքմենական էներգետիկ նախագծերի իրականացմանը եւ ֆինանսավորմանը:

- ❖ ԱՄՆ կառավարությունը պատրաստ է սատարել առաջատար ամերիկյան տեխնոլոգիաների ներթափանցմանը Թուրքմենստան, ինչպես նաեւ կազմակերպել էներգետիկ ոլորտի թուրքմենական ազգային կադրերի պատրաստման ծրագրեր ինչպես Թուրքմենստանի, այնպես էլ ԱՄՆ տարածքում:

- ❖ Եվ, միզուցե ամենակարելորդ, *ԱՄՆ կառավարությունը պատրաստ է աջակցել ամերիկյան ընկերությունների կողմից թուրքմենական գազի եւ նավթի պաշարների անկախ աուդիտի անցկացմանը:*

Նշենք, որ էներգետիկ պաշարների անկախ աուդիտները հիմնականում իրականացվում են երկու նպատակով.

Ա. պարզել պաշարների իրական ծավալը եւ կազմել ապագա ներդրումների մանրամասն ծրագիր,

Բ. հայտարարել «նշանակալից պաշարների» առկայության մասին եւ դրանով իսկ հիմք ստեղծել ԱՄՆ չափազանց բարձր քաղաքական եւ տնտեսական ներխուժման հիմնավորման համար:

Այսպես թե այնպես, վերը նշված փաստերը խոսում են այն մասին, որ ԱՄՆ–Թուրքմենստան էներգետիկ եւ քաղաքական հարաբերությունները մտնում են նոր որակական փուլ: Թուրքմենա-ամերիկյան մերձեցման

հաստատուն ընթացքի ապահովման համար, իհարկե, կարելու է թուրքմենստանի միացումը Անդրկասպյան գազատարի կառուցման նախագծին: Իսկ սա, իր հերթին, հնարավոր կլինի Կասպիցի կարգավիճակի եւ հանքավայրերի սեփականության վերաբերյալ առկա թուրքմենա-ադրբեջանական վեճերի վերացման պարագայում միայն:

Այստեղ նույնպես հետաքրքիր զարգացումներ կան: Փետրվար-մարտ ամիսներին անց են կացվել թուրքմենա-ադրբեջանական մի շարք կարելու հանդիպումներ՝ նվիրված Կասպիցի կարգավիճակին: Ընդ որում՝ Ի.Ալիեւի եւ թուրքմենստանի վարչապետ Ռ.Մերեդովի հանդիպման հիմնական թեման եղել է հենց Կասպիցի կարգավիճակի խնդրի քննարկումը: Ուշագրավ է այն փաստը, որ կողմերից ոչ մեկը չի մեկնաբանում բանակցությունների ընթացքը, ինչը որոշ վերլուծաբանների թույլ է տալիս խոսել համապատասխան համաձայնագրի մոտակա ստորագրման հնարավորության մասին: Կենտրոնական Ասիայի գծով հայտնի փորձագետ Մ.Սարիեւը, օրինակ, գտնում է, որ Կասպիցի կարգավիճակի հարցը վերջնականապես կլուծվի առաջիկա ամիսների ընթացքում, մինչեւ թուրքմենստանի նախագահի այցը Բաքու, որը նախատեսվում է մինչեւ տարվա կեսը: Ըստ Սարիեւի, թե՛ Ազգաբաղը, թե՛ Բաքուն այսօր գտնվում են շատ ուժեղ ամերիկյան ճնշման տակ եւ ստիպված կլինեն համաձայնության գալ:

Իսկ սա նշանակում է, որ կա տարածաշրջանային համագործակցության նոր ձեւաչափի ստեղծման մեծ հնարավորություն, որի արդյունքում էլ ավելի կնեժանա Չարավային Կովկասի էներգետիկ տարանցման դերը՝ տարածաշրջանի երկրների համար դրանից բխող բոլոր դրական եւ բացասական հետեւանքներով:

**ԱՅԼԱՏՅԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՐԵՎՍՈՒՏՔՈՒՄ.  
ԻՍԼԱՄԱՖՈՐԻԱՅԻ ՄԱՍԻՆ  
Սուրեն Մանուկյան**

Անհանդուրժողականությունը եւ այլատյացությունը մարդկության անբաժանելի ուղեկիցներն են նույնիսկ ամենաբարեկեցիկ եւ հաջողակ հասարակություններում: Հաճախ այս երեւոյթները դուրս են գալիս առանձին պետության սահմաններից եւ ձեւափոխվելով՝ դառնում միեւնոյն մեխանիզմներով տարածվող եւ նույն ցուցիչներով արտահայտվող համաշխարհային միտումներ: Ժամանակակից աշխարհում նման միտումներից է իսլամաֆոբիան, որն, ինչքան էլ արտառոտ թվա, առավելապես ընդգրկել է ազատական Արեւմուտքը:

**Հասկացության երկրորդ ծնունդը**

Առաջին անգամ «իսլամաֆոբիա» եզրը 1922թ. օգտագործեց արեւելագետ էթյեն Դինեն իր «Արեւելքը Արեւմուտքի աչքերով» էսսեում՝ փորձելով նշել իսլամի նկատմամբ այն բացասական վերաբերմունքը, որը գոյություն ուներ Եվրոպայի եւ մահմեդական աշխարհի միջեւ բազմաթիվ հակամարտությունների պատճառով՝ խաչակրաց արշավանքներից մինչեւ գաղութատիրության դարաշրջան:

Տասնամյակներ մոռացության մատնված այս հասկացությունը 20-րդ դարի վերջում սկսեց ակտիվորեն կիրառվել: Այն քաղաքական բառապաշար մտավ 1997թ.՝ բրիտանական Runnymede Trust հետազոտական կենտրոնի հրապարակած «Իսլամաֆոբիա. մարտահրավեր բոլորի համար» զեկույցի շնորհիվ, որում իսլամաֆոբիան բնորոշվում է իբրեւ իսլամի նկատմամբ իռացիոնալ, անբացատրելի վախ եւ ատելություն, որը տարածված է հասարակության բոլոր շերտերում: Այն արտահայտվում է հետեւյալ կերպ. իսլամն ընկալվում է ոչ թե իբրեւ Արեւմուտքից տարբեր, այլ նրանից հետամնաց քաղաքակրթություն, իսկ մահմեդական մշակույթը՝ քարացած, այլ կարծիքների հանդեպ թշնամական, կնատյաց եւ ուրիշ մշակույթների համար սպառնալիք պարունակող երեւոյթ:

2004 թվականին կայացավ «Պայքար իսլամաֆոբիայի դեմ» միջազգային կոնֆերանսը՝ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի նախագահությամբ, իսկ Եվրոպայի խորհուրդը դատապարտեց իսլամաֆոբիան բարձր մակարդակի հանդիպումներից մեկի ժամանակ:

Ավելի լայն իմաստով, «իսլամաֆոբիա» երեւոյթը միավորում է իսլամի հանդէպ իրականացված բոլոր այն գործողութիւնները եւ արտահայտութիւնները, որոնք մահմեդականների կողմից բացասական են գնահատվում՝ բռնի գործողութիւններից մինչեւ մահմեդականների կամ իսլամական ակտիվիստների, ինչպէս նաեւ իսլամական հավատքի եւ սոցիալական պրակտիկայի նկատմամբ ցանկացած քննադատութիւն: Այսպիսով, տերմինն այսօր դուրս է եկել ավանդական շրջանակներից եւ օգտագործվում է իբրեւ «իսլամի նկատմամբ նախապաշարումների» հոմանիշ: Այս երկրորդ՝ ավելի ընդհանուր բնորոշումը թույլ է տալիս որոշ գիտնականների վիճարկել տերմինի անհրաժեշտութիւնը, քանի որ այն գրեթէ համընկնում է ռասիզմ, հակաիսլամիզմ, հակասեմիտիզմ, քսենոֆոբիա եւ այլ երեւոյթների հետ:

### **խտրականութիւն եւ սոցիալական օտարում**

Եթէ տերմինի անհրաժեշտութեան հարցը կարող է վիճարկվել, ապա երեւոյթի գոյութեան հարցը միանշանակ է:

Արեւմուտքում ապրող մահմեդականները խտրական վերաբերմունք են զգում, որն արտահայտվում է կյանքի տարբեր բնագավառներում՝ աշխատանքի եւ ուսման վայրում, կենցաղային հարցերում եւ զանգվածային լրատվական միջոցների հաղորդումներում: Կանխակալ վերաբերմունքը գրեթէ հնարավորութիւն չի տալիս մահմեդականներին ինտեգրվել հասարակութեան մեջ եւ իրենց զգալ նրա լիիրավ անդամ. սա է այն հիմնական եզրակացութիւնը, որն արվել է Եվրոպական դիտարկման կենտրոնի կողմից հրապարակված «Մահմեդականները Եվրամիութիւնում՝ խտրականութիւն եւ իսլամաֆոբիա» զեկույցում:

Զեկույցը նշում է խտրականութեան հստակ թվեր: Օրինակ՝ Մեծ Բրիտանիայում գործազրկութեան մակարդակը պակիստանցների եւ բանգլադէշցիների մոտ 20% է, այն դեպքում, երբ բոլոր ներգաղթողների մոտ՝ ընդամենը 11%, իսկ ընդհանուր առմամբ երկրում՝ 6 %, Գերմանիայում թուրքերի գործազրկութեան թիվը 21% է, իսկ ամբողջ երկրում՝ 8%: Գործատուներն աշխատանքի ընդունելու պարագայում նախընտրում են հրաժարվել մահմեդական թեկնածուներից: Նույն միտումը դիտվում է կրթական ոլորտում՝ մահմեդականներին հազվադէպ է հաջողվում ստանալ բարձրագույն կրթութիւն, եւ սա ազդում է նրանց հետագա սոցիալական կարգավիճակի վրա: Բացի այդ, մահմեդականները, որպէս կանոն, ավելի վատ պայմաններում են բնակվում, ավելի վատ թաղամասերում ապրում եւ այդ պատճառով զրկված են, օրինակ, լավ դպրոցներ հաճախելու հնարավորութիւնից:

Մահմեդականների նկատմամբ բացասական վերաբերմունքը տեղավորվում է նաեւ բոլոր ներգաղթողների եւ փոքրամասնությունների նկատմամբ գոյություն ունեցող բացասական վերաբերմունքի շրջանակներում: Ձեկույցում կա մի օրինակ Ռոտերդամում ապրող երիտասարդ մահմեդական կնոջ պատմությունից: «Ե՞րբ եք դուք պատրաստվում վերադառնալ այնտեղ, որտեղից եկել եք հաճախակի տրվող հարցին ես պատասխանում եմ, որ ես տեղ չունեմ գնալու, քանի որ ծնվել եմ այստեղ՝ Ռոտերդամում: Սա դժվար է լսել, քանի որ այն ստիպում է քեզ օտարերկրացի զգալ: Երբեմն ես ինքս ինձ բռնում եմ այն մտքի մեջ, որ ինքս ինձ արդեն օտարերկրացի եմ համարում»:

Օտարվածության աստիճանը տարեցտարի ավելանում է՝ կապված տարբեր աղմկահարույց դեպքերի լայն հասարակական քննարկման հետ (օրինակ՝ անկարգությունները բելգիական եւ ֆրանսիական քաղաքների արվարձաններում, հիջաբ կրելու խնդիրը Ֆրանսիայում, կենդանիների ծիսական սպանության հիմնահարցը Շվեյցարիայում, Մուհամեդ մարգարեի ծաղրանկարների հրապարակումը Դանիայում եւ դրա արձագանքը իսլամական աշխարհում), երբ տեղական քրիստոնյա մեծամասնությունն ընկալում է կատարվածն իբրեւ սպառնալիք իր սեփական ինքնությանը:

Որպես արդյունք՝ աճում են մահմեդականների դեմ ուղղված քայլերը, ինչպիսիք են, օրինակ, բարբարոսությունները մզկիթների եւ մահմեդական կենտրոնների նկատմամբ, հիջաբ կրող կանանց հասցեին հնչող վիրավորանքները, մզկիթներ կառուցելու արգելքները, լրացուցիչ ստուգումներն օդանավակայաններում եւ այլն:

Իսլամական համայնքի բնական պատասխանն է դառնում ահաբեկչության հետ իսլամի կապի ժխտումը եւ անարդարացի հետապնդման մեջ Արեւմուտքին ներկայացվող հակադարձ մեղադրանքը, որն իր արտահայտությունն է գտնում իսլամաֆոբիայի բանաձեւում:

### **Չակախւամականության նոր ալիքի պատճառները**

Իսլամաֆոբիայի աճի ժամանակակից պատճառները հասկանալու համար պետք է առանձնացնել դրա մի քանի հստակ շերտ:

#### *ա/ Օրիենտալիստական*

Պատմական հիշողությունը եւ կարծրատիպերը մեծապես ազդում են հասարակական գիտակցության վրա: Հենց օրիենտալիզմն ընդգծեց եվրոպական պետություններին եւ արեւմտյան աշխարհին դեռ միջին դարերից եւ Վերածննդի շրջանից բնորոշ սեփական մշակույթի գերազանցության զգացումը: Այս շրջանից մշակութային եսակենտրոնությամբ տառապող եվրոպան քամահրանքով է վերաբերվում մյուս մշակույթ-

ներին: Շատ հետազոտողների կարծիքով, հենց այս՝ պատմականորեն ձեւավորված հանրային գիտակցությունն է ընկած իսլամի նկատմամբ եվրոպացիների արհամարհական վերաբերմունքի հիմքում եւ շատ կարելոր հետեւանքներ ունի:

*բ/ Մշակութաբանական*

Արեւմուտքում վերջին տասնամյակների ընթացքում հստակ հակաիսլամական դիսկուրս է առաջացել: Այն կապված է առաջին հերթին Արեւմուտքում իսլամական համայնքների առաջացման հետ, որտեղ ընթացող գործընթացները, արմատացած ավանդույթները եւ ամենօրյա գործառույթները վտանգ են ներկայացնում արեւմտյան հասարակությունների մշակութային, լեզվական եւ ազգային միասնությանն ու հաստատված հասարակական կարգին:

Այս զգացումն ավելի է ընդգծվում ՁԼՄ-ի կողմից: Քանի որ իսլամաֆոբիայի դասական ընկալումը կապված է անբացատրելի վախի զգացման հետ, ապա չափազանց կարելոր է այն կերպարը, որը ստեղծվում է ՁԼՄ-ի միջոցով: Ներկայացվող նյութերը, հաճախ չլինելով ուղղակի հակաիսլամական, այնուամենայնիվ, իրենց սենսացիոն բնույթով որոշակիորեն անվտանգության սպառնալիք են արթնացնում: Այս ամենը խորքային մակարդակում հստակ բացասական կարծիք է ձեւավորում: Նկատվում է նաեւ համաշխարհային եւ տեղական իսլամը խառնելու միտում, երբ գլոբալ իսլամական արմատական գործողությունները մեխանիկորեն տեղափոխվում են տեղական իսլամի վրա: Օրինակ, խոսելով ահաբեկչության երեւույթի մասին՝ այն հիմնականում բացատրվում է իսլամին բնորոշ ընդհանուր հատկանիշներով, եւ որպես հետեւանք՝ ցանկացած մահմեդական դառնում է, ասենք, պոտենցիալ ահաբեկիչ:

Հաստատվել է չբարձրաձայնվող տարբերություն «հակամարտածին մշակույթների» եւ «ինտեգրացիոն մշակույթների» միջեւ: Իսլամը առաջին դասին է պատկանում եւ դիտարկվում որպես սպառնալիք արեւմտյան հասարակության, արժեհամակարգի եւ ինքնության համար:

*գ/ Անվտանգության*

Իսլամաֆոբիայի կարելորագույն պատճառներից է նաեւ ուղղակի ֆիզիկական ոչնչացման վտանգը: ԱՄՆ-ում, իսկ հետո նաեւ Եվրոպայում (Մադրիդ, Լոնդոն) իրականացված ահաբեկչական գործողություններից հետո առաջացած հակաահաբեկչական տրամադրությունները վերածվեցին նաեւ հակաիսլամական տրամադրությունների: Դրանք վճռական դեր ունեցան իսլամի կերպարի ստեղծման համար, մասնավորապես երբ այդ իրադարձությունները մեկնաբանվեցին իբրեւ աշխարհակարգի երկու



տարբեր, հակադիր՝ արեւմտյան եւ իսլամական մոդելների բախում: ԱՄՆ-ում ստեղծված վախի մթնոլորտը եւ դրան հետեւած հակաիսլամական ելույթների ալիքն այնքան ուժեղ էին, որ դրանց մարման համար անհրաժեշտ եղավ նույնիսկ երկրի առաջին դեմքերի միջամտությունը:

Հատկանշական էին Եվրոպայում իրականացված ահաբեկչական գործողությունները: Ի տարբերություն սեպտեմբերի 11-ի, դրանք իրականացնողներն ունեին տեղական ծագում, իսկ լոնդոնյան դեպքերի հեղինակները բրիտանական քաղաքացիներ էին եւ ծնվել էին հենց Մեծ Բրիտանիայում: Սա առաջացրեց մի նոր իրողություն, որի հետ հասարակությունները չէին կարող հաշվի չնստել: Փաստորեն, սեփական երկրի ներսում հայտնվել էր մի թշնամի, որի հետ պայքարելն անհամեմատ ավելի դժվար էր թե՛ տեխնիկապես, թե՛ հոգեբանորեն: Այս իրողությունն իր հետ բերեց մահմեդականների նկատմամբ անվստահության մթնոլորտի բնական ավելացում:

### **Այլ կարծիք**

Սակայն իսլամաֆոբիայի երեւոյթի նկատմամբ կարծիքները նույնպես միանշանակ չեն: Ոմանց կողմից «իսլամաֆոբիա» տերմինը եւ նույնիսկ այդ երեւոյթի գոյությունը չի ընդունվում: Ավելին, իսլամաֆոբիան համարվում է հատուկ նպատակով ստեղծված մի հասկացություն, որն իսլամիստներն օգտագործում են արմատական իսլամականության քողարկման եւ քաղաքական դիվիդենտներ ստանալու համար:

Օրինակ, այդ կարծիքին է ծայրահեղ աջ գաղափարներով հայտնի ամերիկյան հետազոտող Դենիել Փայփսը: Ըստ նրա՝ իսլամաֆոբիա տերմինն ի հայտ եկավ Մեծ Բրիտանիայում 10 տարի առաջ, «իսլամաֆոբիայի դեմ բրիտանական մահմեդականների հանձնաժողովի» շնորհիվ, եւ օգտագործվում է ամեն անգամ, երբ իսլամական կազմակերպությունները քննադատության են ենթարկվում: Նա կարծում է, որ իսլամի հանդեպ վախը ոչ թե իռացիոնալ զգացում է, այլ մահմեդականների որոշակի գործողությունների հետեւանք եւ, բացի այդ, «իսլամաֆոբիա» բառն արհեստականորեն միավորում է երկու տարբեր երեւոյթներ՝ վախ արմատական իսլամի եւ ընդհանրապես իսլամի հանդեպ: Ըստ Փայփսի, երեւոյթի տարածվածությունը եւ վտանգը չափազանցված են: Նա հերքում է այն, որ բրիտանական մահմեդականները մշտապես բախվում են խտրականության ուստիականության կողմից, քանի որ վիճակագրությունը դա չի հաստատում, իսկ սոցիալական խտրականության պարագայում նշում, որ վերջին տարիներին միայն մեկ գիրք է հրատարակվել, որը դիվայնացնում է իսլամը՝ Լեոն Յուրիսի «Հաջը»: Նա համաձայնում է, որ

մահմեդականները երբեմն դառնում են խտրականության զոհ, սակայն չի համարում դրանք իսլամատյացության արդյունք, այլ տեղավորում է ընդհանուր այլատյացության մեջ:

Չարլզ Մուրն իր հերթին առաջարկում է այս տերմինի նոր մեկնաբանում՝ մահմեդականների կողմից վախի զգացում սեփական կրոնի հանդեպ կամ նրանից, ինչի իսլամը վերածել են արմատականները:

Ըստ Յասմին Բրաունի, իսլամաֆոբիան օգտագործվում է հասարակությանը շանտաժի ենթարկելու եւ յուրաքանչյուրին, ով կհանդգնի քննադատել իսլամադավանների կողմից կատարված ցանկացած քայլ, լռեցնելու համար:

Եվս մեկ ասպեկտ, որը հաճախ անտեսվում է, բայց չափազանց կարեւոր նշանակություն ունի: Եթե դիտարկենք իսլամաֆոբիան իսլամական օրենսդրության տեսակետից, ապա համաձայն Ղուրանի, մահմեդականների հետապնդումները, նույնիսկ այն երկրներում, որտեղ նրանց չի պատկանում քաղաքական իշխանությունը, կարող են բավարար առիթ դառնալ զինված ջիհադի համար, որը տվյալ դեպքում կդիտարկվի օրինական ինքնապաշտպանություն:

Բացի այդ, իսլամաֆոբիայի երեւոյթը, որքան էլ դա զարմանալի հնչի, որոշակի օգուտ է բերում նաեւ մահմեդական համայնքներին: Իրական եւ մտացածին ճնշումները թույլ են տալիս համայնք ներգրավել այն մահմեդականներին, որոնք ժամանակին կտրված էին նրանից: Արտաքին վտանգը համախմբում է մահմեդական հանրությանն արեւմտյան հասարակություններում: Բացի այդ, առաջանում են կազմակերպություններ, որոնք իսլամաֆոբիայի դեմ պայքարելու պատրվակով, հնարավորություն են ստանում խոսել ամբողջ մահմեդական համայնքի անունից եւ արժանանում են ընդունող հասարակությունների իշխանությունների ուշադրությանը (օրինակ, ԱՄՆ-ում CAIR-ը՝ ամերիկա-իսլամական հարաբերությունների խորհուրդը):

**ԻՍԼԱՄԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ  
ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎԸ ԴԱՔԱՐՈՒՄ  
Արաքս Փաշայան**

2008թ. մարտի 13-14-ը Սենեգալի մայրաքաղաք Դաքարում տեղի ունեցավ իսլամական աշխարհի բարձրագույն քաղաքական մարմնի՝ իսլամական կոնֆերանս կազմակերպության (ԻԿԿ) հերթական 11-րդ գագաթաժողովը՝ «Իսլամը 21-րդ դարում» խորագրով, որին մասնակցում էին 57 անդամ երկրների պատվիրակներ, շուրջ 40 իսլամական պետությունների առաջին դեմքեր: Հանդիպմանն ընդունվեց եզրափակիչ կոմյունիկե, որն արտացոլում է իսլամական պետությունների համագործակցության տարբեր ասպեկտները. գագաթաժողովն ընդունեց նաև հռչակագիր:

Գագաթաժողովն, ԻԿԿ կանոնադրության համաձայն, գումարվում է երեք տարին մեկ անգամ՝ քննարկելու իսլամական աշխարհին հուզող կարեւոր խնդիրները: Գագաթաժողովից առաջ, մարտի 10-11-ը (ինչպես միշտ) տեղի ունեցավ իսլամական պետությունների արտգործնախարարների հանդիպումը, որը նախապատրաստեց քննարկվող հարցերի շրջանակը:

Եիշտ է, գագաթաժողովում առաջադրված էին բազմաթիվ հարցեր, սակայն հիմնական ուշադրությունը սեւեռվեց մի քանի կարեւորագույն խնդիրների վրա: Դրանցից մեկը կազմակերպության արդիականացման հարցն էր, մասնավորապես՝ նոր կանոնադրության ընդունումը: ԻԿԿ-ն հիմնվել է 1969թ. Ռաբաթում, իսկ կազմակերպության կանոնադրությունն ընդունվել է 1972-ին, այսինքն՝ սառը պատերազմի տարիներին, երբ իսլամական աշխարհը երկփեղկված էր երկու մասի: Դեռևս այն ժամանակ ԻԿԿ կանոնադրության մեջ արտացոլվեցին արաբական իսլամական աշխարհի համար այնպիսի կարեւորագույն հարցեր, ինչպիսիք էին Պաղեստինի եւ Երուսաղեմի խնդիրները, որոնք այսօր էլ շարունակում են օրակարգային մնալ:

ԻԿԿ արդիականացման հարցն առավել օրակարգային դարձավ 2004-ից ի վեր, երբ ԻԿԿ գլխավոր քարտուղար դարձավ Թուրքիայի ներկայացուցիչ, իսլամական աշխարհում բավական համարում ունեցող պրոֆ. Էքմենուդդին Իհսանօղլուն, ով ԻԿԿ ընտրանու աջակցությամբ

ծեռնամուխ եղավ կազմակերպության բարենորոգման գործին: (Վերջինս Դաքարի հանդիպմանը վերընտրվեց երկրորդ անգամ՝ հինգ տարի ժամկետով): Նոր կանոնադրությունը, գլխավոր քարտուղարի խոսքերով, մատնանշում է իսլամի չափավորությունն ու հանդուրժողականությունը, իսկ կազմակերպության գործունեությունը դարձնում առավել արդյունավետ: Մասնավորապես, փոխված է որոշումների ընդունման մեխանիզմը: Եթե նախկինում որոշումներն ընդունվում էին կոնսենսուսով, ինչին շատ դեպքերում դժվար էր հասնել անդամ պետությունների ունեցած տարբեր քաղաքական կողմնորոշումների պատճառով, ապա այժմ որոշումները կարող են ընդունվել նաեւ 2/3-ով: Հատկանշական է, որ նոր կանոնադրության առանձին դրույթների հետ կապված՝ անդամ երկրների շրջանում անհամաձայնություններ են եղել: Օրինակ, ԻԿԿ անդամ Ուզանդան, որը փոքրաթիվ մահմեդական բնակչություն ունի, դեմ է եղել նորացված կանոնադրության մեջ ամրագրված այն դրույթին, համաձայն որի՝ ԻԿԿ անդամ կարող է լինել միայն այն պետությունը, որտեղ բնակչության մեծամասնությունը մահմեդական է: Իսկ Պակիստանը պնդել է, որ նախքան ԻԿԿ-ին անդամության հայտ ներկայացնելը, տվյալ պետությունը պետք է կարգավորի խնդիրներն անդամ երկրի կամ երկրների հետ, եթե այդպիսիք կան:

Գազաթաժողովում բանաձեւ ընդունվեց տնտեսապես աղքատ ԻԿԿ անդամ պետություններին (հատկապես Աֆրիկայի) ֆինանսական օգնություն ցույց տալու մասին, սահմանվեց նրանց երկարատեւ վարկեր տրամադրելու ձեւաչափը, իսկ Ջարգացման իսլամական համերաշխության հիմնադրամը որոշվեց համալրել 10 մլրդ \$-ով: ԻԿԿ շրջանակներում գիտակցում են, որ իսլամական աշխարհը ներկայումս բախվել է մի շարք խնդիրների, որոնք են՝ տնտեսական եւ սոցիալական հետամնացությունը, օտար ազդեցությունները, տարանջատումը, ինչը կարելի է հաղթահարել իսլամի հիմնարար արժեքները վերականգնելով:

Գազաթաժողովում քննարկվեցին իսլամական աշխարհի համար կնճռոտ այնպիսի հիմնահարցեր, ինչպիսիք են՝ արաբ-իսրայելական հակամարտության եւ Երուսաղեմի խնդիրը, Լիբանանում նախազահական ընտրություններում ստեղծված ճգնաժամային վիճակը, Իրաքի, Սոմալիի, Դարֆուրի իրադրությունը, հարաբերությունները Չադի եւ Սուդանի միջեւ:

Գազաթաժողովից առաջ որոշակի տարածայնություններ էր առաջացրել Կոսովոյի հարցը: Մասնավորապես, Թուրքիան առաջարկել էր գազաթաժողովի եզրափակիչ կոմյունիկեում կետ մտցնել Կոսովոյի

անկախության ճանաչման վերաբերյալ, ինչին դեմ էին արտահայտվել Ադրբեջանը, Եգիպտոսը, Սուդանը եւ Ինդոնեզիան: Արդյունքում՝ բանաձեւում հիշատակվեց Կոսովոյի ժողովրդի հետ համերաշխության մասին: Ի դեպ, իսլամական հինգ երկրներ՝ Թուրքիան, Ալբանիան, Մալայզիան, Աֆղանստանը եւ Սենեգալը, պաշտոնապես ճանաչել են Կոսովոն:

Դաքարի գազաթափողվում ընդունվեց նաեւ «Հայաստանի Հանրապետության ազրեսիան Ադրբեջանի Հանրապետության դեմ» բանաձեւը: ԻԿԿ-ն, որպես կանոն, խստորեն դատապարտեց Հայաստանի «ազրեսիան» Ադրբեջանի դեմ, Ադրբեջանի քաղաքացիների նկատմամբ իրականացված գործողությունները որակվեցին որպես «մարդկության դեմ ուղղված հանցագործություն»: ԻԿԿ-ն դատապարտեց «ադրբեջանական գրավյալ տարածքներում» ճարտարապետական, մշակութային, կրոնական հուշարձանների ոչնչացման փաստը, պահանջեց, որպեսզի Հայաստանն առանց նախապայմանների եւ ամբողջապես դուրս բերի զորքերը «ադրբեջանական գրավյալ տարածքներից, ներառյալ Լեռնային Ղարաբաղից», ներդնի ՄԱԿ-ի Ախ 822, 853, 874, 884 բանաձեւերը, ճանաչի Ադրբեջանի ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը: ԻԿԿ-ն կոչ արեց անդամ պետություններին եւ միջազգային հանրության այլ անդամներին՝ Հայաստանի դեմ օգտագործել քաղաքական եւ տնտեսական միջոցներ Հայաստանի կողմից Ադրբեջանի նկատմամբ «ազրեսիային» վերջ դնելու համար: Այս համատեքստում, ԻԿԿ-ն կոչ արեց իսլամական երկրներին՝ համերաշխ լինել Ադրբեջանի հետ:

Նշենք, որ 1994-ից մինչ օրս հայ-ադրբեջանական հակամարտության վերաբերյալ Իսլամական կոնֆերանսի հռետորականության մեջ գրեթե ոչինչ չի փոխվել. ԻԿԿ-ն Լեռնային Ղարաբաղի հարցը համարելով հայ-ադրբեջանական հակամարտություն՝ խնդիրը դիտարկում է խիստ միակողմանի՝ հենվելով բացառապես իսլամական համերաշխության սկզբունքի վրա: Միեւնույն ժամանակ, ԻԿԿ-ն գործուն որեւէ քայլ չի ձեռնարկել խնդրի կարգավորման ուղղությամբ: ԻԿԿ-ի փաստական օգնությունն Ադրբեջանին ՄԱԿ-ում հօգուտ Ադրբեջանի իսլամական պետությունների քվեարկությունն է, ինչի ապացույցը մայիսի 14-ին ՄԱԿ ԳԱ՝ Լեռնային Ղարաբաղի մասին ընդունած բանաձեւն է:

Հատկանշական է, որ 2008թ. հունվարին տեղի ունեցած Իսլամական կոնֆերանս կազմակերպության խորհրդարանական վեհաժողովի կողմից նույնպես Հայաստանի վերաբերյալ նմանատիպ շեշտադրումներով բանաձեւ ընդունվեց:

Դաքարի հանդիպմանը քննարկվեց եւ համապատասխան բանաձեւով վերստին ամրագրվեց 2006թ. Մեքքայի գազաթափողովում հաստատված «Միացյալ իսլամական գործողության» տասը տարվա ծրագիրը, որն ուրվագծում է իսլամական գլոբալ եւ միջիսլամական համագործակցության ռազմավարությունը:

Առանձին ձեւաչափով քննարկվեց *իսլամաֆորիայի* հարցը, ինչն ԻԿԿ անդամ երկրների կարծիքով, վերջին շրջանում ակնհայտորեն սրվել է: Իսլամական հանրությանը մտահոգում է սեպտեմբերի 11-ից հետո հատկապես Եվրոպայում եւ Ամերիկայում իսլամի եւ իսլամական քաղաքակրթության նկատմամբ խորացող անհանդուրժողականությունը: Արդեն որերորդ անգամ ԻԿԿ-ն կոչ արեց Արեւմուտքին՝ խիստ միջոցառումներ ձեռնարկել՝ կանխելու *իսլամաֆորիայի* դրսեւորումները, մասնավորապես, կանխել իսլամական խորհրդանիշերի անարգումը: Նման մտահոգության պատճառը վերջերս դանիական մամուլում Մուհամեդ մարգարեի ծաղրանկարների վերահրատարակումն էր եւ Նիդեռլանդներում իսլամի սուրբ գիրքը՝ Ղուրանը քննադատող վավերագրական ֆիլմի նախապատրաստումը: Իսլամական աշխարհի առաջնորդները զգուշացրին, որ իսլամն ահաբեկչության հետ նույնացնելը նպաստում է մահմեդականների արմատականացմանը:

Չնայած իսլամական աշխարհին էապես անհանգստացնում են Արեւմուտքի միջամտությունն իսլամական աշխարհի գործերին, ԱՄՆ-ի հարաճուն ազդեցությունը Մերձավոր եւ Միջին Արեւելքում, ԻԿԿ-ին այդպես էլ չի հաջողվում Արեւմուտքի հետ հարաբերություններում որոշակի քաղաքականություն մշակել: Պատճառը թերեւս այն է, որ այսօր իսլամական աշխարհը տարանջատված է ԱՄՆ-ի կողմնակիցների եւ հակառակորդների միջեւ, ինչը որոշակիորեն խոչընդոտում է միասնականությանը:

ԻԿԿ-ն հաճախ է քննադատվում սեփական որոշումները գործադրելու անկարողության մեջ: Նշվում է, որ ընդունված բանաձեւերը, վճռական շեշտադրումներով հանդերձ, առավելապես հռչակագրային բնույթ ունեն: ԻԿԿ-ն մինչ օրս չի կարողացել հասնել իսլամական աշխարհի թերեւս ամենակնճռոտ խնդրի՝ պաղեստինյան եւ շատ այլ հարցերի կարգավորմանը, չնայած այն հանգամանքին, որ ԻԿԿ անդամ պետությունները (որոնք մոտ 1,5 մլրդ մահմեդական բնակչություն ունեն) տիրապետում են որոշակի ռեսուրսների: Մասնավորապես, Ծոցի երկրները (ինչպես նշում են շատերն իսլամական աշխարհում) կարող են օգտագործել, ասեմք, նավթային գործոնը Արեւմուտքի հետ հարաբերություններում:

Այսուհանդերձ, պետք է կարծել, որ առաջիկայում եւս միջխլամական հարաբերությունների առանցքը կմնա էթնիկ, ռասայական եւ աշխարհագրական պատկանելությունը ստորադասող *ուժմայի* (խլամական ազգի) գաղափարը, իսկ իսլամը կշարունակի հանդես գալ որպես իսլամական աշխարհի զարգացման ուղղություն, մահմեդական երկրների եւ ժողովուրդների միջեւ համագործակցության նախապայման: ԻԿԿ-ն ձգտում է ապացուցել, որ իսլամական աշխարհն անջրպետված չէ մնացյալ աշխարհից, իսկ մահմեդականներին առնչվող ամենասուր հակամարտություններն անգամ կոչ է անում լուծել խաղաղ ճանապարհով: Իսլամական աշխարհի գործիչները ցանկանում են, որպեսզի իսլամը 21-րդ դար մուտք գործի՝ զարկ տալով արդիականացմանը, հասարակական գիտակցության մեջ որոշակիորեն հաղթահարելով անհանդուրժողականությունն ու կրոնական մոլեռանդությունը:

**Ջրի գնելու Բժեղի նսկի. «ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ԻՍԿԱԿԱՆ  
ԱՌԱՋԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՊԱՇՆՈՐՅ  
ԳԵՐԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ»**

**Չարցազրույցն առաջին անգամ լույս է տեսել 2007թ.  
դեկտեմբերին, «Prospect» հանդեսում**

*Չարց* – Կա՞, արդյոք, վտանգ, թե Ռուսաստանը կրկին կարող է դառնալ ԱՄՆ ռազմական ախոյանը:

*Պատ.* – Կասկածում եմ: Համաշխարհային մասշտաբով ԱՄՆ ռազմական ախոյան դառնալու համար Ռուսաստանին հարկ կլինի կատարել մի ինչ-որ առաքելություն, իրականացնել գլոբալ ռազմավարություն եւ, հավանաբար, ձեռք բերել գաղափարախոսական հենք: Սա ինձ քիչ հավանական է թվում: Այդ ամենից զատ, Ռուսաստանի հնարավորությունները, խորհրդային անցյալի համեմատ, էականորեն նվազել են: Եթե կարճ ասենք՝ այն համընդհանուր մոբիլիզացումը, որ խորհրդային հասարակարգը կարողացավ պարտադրել Ռուսաստանին, շատ դժվար կլինի հիմնավորել եւ օրինականացնել՝ առանց ամուր եւ համապարփակ գաղափարախոսական հենքի:

*Չարց* – Ձեր վերջին՝ «Երկրորդ հնարավորություն» գրքում Դուք խիստ քննադատաբար եք արտահայտվել Բուշ-կրտսերի մասին:

*Պատ.* – Ջորջ Բուշ-կրտսերի մասին զուլխը ես կոչել եմ «Աղետաբեր ղեկավարություն»: Նա բացարձակապես չընթանեց պատմական պահը եւ իրականության մասին ուներ չափազանց աղճատված պատկերացում, ինչն ամբողջավարորեն քարոզեց, որպեսզի բոլորովին ավելորդ պատերազմում ստանա ամերիկյան հասարակության աջակցությունը: Իմ կարծիքով, կա մշտական վտանգ, որ այդ պատերազմի մասշտաբները կարող են աճել՝ մինչ Բուշը կլքի իր պաշտոնը:

*Չարց* – Ի՞նչ իմաստով՝ աճել:

*Պատ.* – Այն իմաստով, որ Իրաքում շարունակվող հակամարտությունը, ինչը Բուշն ակնհայտորեն որոշել է ժառանգություն թողնել իր հաջորդին, ստեղծում է նոր բախումների, սադրանքների, Իրանի հետ զինված դիմակայության սպառնալիք: Հնարավոր է նույնիսկ ահաբեկչական գործողություն Միացյալ Նահանգներում, որի մեղքը կարելի է



հեշտությամբ բարդել իրանցիների վրա: Դա է Իրաքի պատերազմի ներքին դիմամիկան: Վերջերս «Ալ-Կաիդան» հայտարարեց, թե Ամերիկայի եւ Իրանի միջեւ ռազմական բախումը հիմնականում համընկնում է իր ռազմավարական շահերին: Մեր երկրում եւ արտասահմանում կան նաեւ այլ ուժեր, որոնք սատարում են Իրանի դեմ մարտական գործողությունը: Հետեւաբար, կա վտանգ, որ Իրաքում շարունակվող հակամարտությունը կարող է ինքնին չնախատեսված ձեւով վերաճել ամերիկա-իրանական դիմակայության, իսկ դա, իր հերթին, գործի կզցի այլ չկանխատեսված գործոններ: Արդյունքում՝ Ամերիկան կխճճվի այս տարածաշրջանում, ինչը կվճարի նրա պետական շահերին եւ, ընդհանրապես, խաղաղությանը մեր երկրագնդում:

*Չարդ* – Եթե Բուշի հաջորդը լինի դեմոկրատ, նա ինչպե՞ս կկարողանա վերջ դնել այս ամենին:

*Պատ.* – Ես նոր նախագահին կոչ կանեի ձեռնարկել քայլեր, որոնք պատերազմը կհանգեցնեն քաղաքական ավարտի: Դա հարկավոր է անել անհապաղ՝ հատկապես այն պատճառով, որ Պարսից ծոցի անկայուն եւ պայթյունավտանգ տարածաշրջանում ցանկացած հանդարտ շարունակվող հակամարտություն ունի ներքին դիմամիկա, ինչը վերջնական արդյունքում կարող է բերել Իրանի հետ զինված դիմակայության:

Հաջորդ նախագահին հարկավոր է շտապել. առաջին հերթին՝ սկսել բանակցություններ իրաքյան բոլոր առաջնորդների հետ (ոչ միայն նրանց, ովքեր գտնվում են Կանաչ գոտում)՝ համատեղ որոշելու համար ամերիկյան զորքերի դուրսբերման ժամկետը: Դա կստիպի իրաքյան առաջնորդներին առավել պատասխանատվությամբ կամ, ծայրահեղ դեպքում, էլ ավելի վճռականորեն վերաբերվել ներքին հակամարտությունների լուծմանը:

Երկրորդ. օգտագործել Իրաքից ամերիկյան զորքերի դուրսբերման փաստը՝ բոլոր սահմանակից երկրներին դրդելու համար՝ սկսել տարածաշրջանային բանակցություններ՝ մեր հեռանալուց հետո Իրաքին անվտանգության խնդիրների լուծման հարցում օգնություն ցուցաբերելու վերաբերյալ: Իրաքի բոլոր հարեւանները, ներառյալ Սիրիան եւ Իրանը, շահագրգիռ են, որպեսզի թույլ չտան պայթյուն Իրաքում: Բացի այդ, անհրաժեշտ է փորձել համոզել մյուս մուսուլմանական երկրներին (մասնավորապես՝ Մարոկոյին, Եգիպտոսին, Ալժիրին) օկուպացիայի ավարտից հետո ռազմական օգնություն ցուցաբերել Իրաքին՝ երկրում իրավիճակը կայունացնելու նպատակով: Վերջապես, հարկ կլինի համաշխարհային ընկերակցության մասնակցությունը (հավանաբար,

ՄԱԿ-ի միջնորդությամբ) իրաքյան հասարակության վերականգնման լայնածավալ ծրագրում, որին այս պատերազմը հասցրեց վիթխարի վնաս: Ձուգահեռաբար, ես առավել լուրջ ջանքեր կներդնեի իրանցիների հետ բանակցություններ անցկացնելու համար, ինչպես նաև կգործադրեի էլ ավելի հետետողական միջոցներ՝ ստիպելու Իսրայելին ու պաղեստինցիներին անկայուն զինադադարի փոխարեն կնքել իրական խաղաղություն:

*Չարդ*– Այժմ, երբ Բուշի դարաշրջանը մոտենում է ավարտին, մենք պարզեցինք, որ Ամերիկայի մոտ «աշխարհն իր հետեւից տանելը» վատ է ստացվում:

*Պատ.*– Հարկ չկա գերիշխանությունը շփոթել սեփական ամենագործության գաղափարի հետ: Իրականում, «առաջատարության» տակ ես հասկանում եմ այն, որ Միացյալ Նահանգները կարող է լինել արդյունավետ միջազգային համագործակցության վճռորոշ դերակատար: Ուրիշ ոչ ոք այն չի կարող անել՝ հաշվի առնելով մեր հնարավորությունները: Դա պարզապես անվիճելի փաստ է: Սակայն մնում է ընտրություն կատարել իսկական առաջատարության եւ ապաշնորհ գերիշխանության միջև:

*Չարդ*– Եկեք վերադառնանք Իրանին: Հարաբերություններն այդ երկրի հետ խաթարվեցին հենց Ձեր ժամանակ՝ Քարթերի նախագահության շրջանում: Դուք սխալ գործեցիք՝ թույլատրելով ՁԼՄ-ին պատանդների վերցման առիթով հասկանալի անհանգստությունն ուռճացնել անչափելի մասշտաբների: Իրանում, 1997թ. ընտրություններից հետո, Քլինթոնը, զգուշանալով իսրայելական եւ իրանական լոբբիից իր մոտ՝ հայրենիքում, նախընտրեց առավել սերտ կապեր չհաստատել Իրանի չափավոր նախագահ Խաթամիի հետ: Երեւում է, որ Ամերիկան իրանական խաղաքարտը պատշաճ կերպով չի խաղարկել:

*Պատ.*– Ցավալի է, բայց դա այդպես է: Կարծում եմ, դուք ավելի իրավացի եք՝ խոսելով ստեղծված հնարավորությունից օգտվելու Քլինթոնի անընդունակության, քան պատանդներին առնչվող հարցի մասին: Ի վերջո, պատանդների հետ կապված ճգնաժամն ԱՄՆ-ում առաջացրեց միանգամայն հասկանալի դժգոհություն: Իրական խնդիրը շահական վարչակարգի փլուզումն էր, ինչը հետեւանք էր այն բանի, որ անցած դարի 50-ական թվականներին Միացյալ Նահանգները տապալեց Մոսադիքին, թեեւ բուն Ամերիկայում այն վատ հասկացան: Հենց այն ժամանակ ԱՄՆ-ը բռնեց մի ուղի, որը ժամանակի ընթացքում նրան բախման հասցրեց գլուխ բարձրացնող իրանական ազգայնականության հետ: Հավանաբար, անգլիացիները մեզ ավելի շատ են մանիպուլացրել,

քան թվում է, երբ ընդունվում էր Մոսադիքին հեռացնելու մասին որոշումը: Չէ՞ որ իրականում Մոսադիքը գտնվել էր ոչ թե մեր, այլ իրենց հետ: Սակայն նրա հեռացումից հետո մենք իրականացրինք լայնածավալ միջամտություն այդ երկրի ներքին գործերին եւ նրա նավթահանքերից սկսեցինք ստանալ եկամուտ, քանզի Մեծ Բրիտանիան այդպես էլ իրեն չվերադարձրեց առաջատար դիրքերն իրանում: Մենք զբաղեցրինք նրա տեղը ու դարձանք իրանական ազգայնականության թիրախը:

Երբ շահին վտանգ սպառնաց, մենք չափազանց երկար հապաղեցինք. ես ստիպված եմ դա խոստովանել: Կամ պետք էր շահին աջակցելու որոշում կայացնել, որպեսզի ճնշել ընդդիմությանը, թույլ չտալ Խոմեյնիի վերադարձը, իսկ հետո բռնել բարեփոխումների ուղին: Կամ մեզ պետք էր արագ ազատվել շահից: Դրա փոխարեն, մենք փորձեցինք գնալ մեջտեղով եւ ստեղծեցինք երկակի իրավիճակ...

*Չարդ* – Բայց չէ՞ որ հենց Դուք եք եղել այդ քաղաքական կուրսի ճարտարապետը:

*Պատ.* – Ես եղել եմ ճարտարապետներից մեկը՝ հակված առաջին ռազմավարությանը, մինչդեռ մյուսներն արտահայտվում էին երկրորդ ուղու օգտին: Այդ երկու մոտեցումների համակցումն անարդյունավետ ստացվեց: Այսօր նույնպիսի երկընտրանքի հետ մենք բախվում ենք Պակիստանում: Մեզ դուր չի գալիս ռազմական դիկտատուրան, բայց կարելի՞ է, արդյոք, վստահ լինել, որ մուսուլմանական մոլեռանդության խառնուրդով ամբոխավարությունն ավելի լավ կլինի: Յնարավո՞ր է, արդյոք, երկիշխանության հաստատումն Պակիստանում նախագահ Մուշարաֆի եւ վարչապետ Բհուտտոյի միջոցով (զրույցը կայացել է մինչ Բենազիր Բհուտտոյի սպանությունը – *խմբ.*), թե՞ դա նշանակելու է նրանց միջեւ բախման առաջին փուլ՝ անկանխատեսելի հետեւանքներով: Պետք է ասեմ, որ չեմ նախանձում մեր առաջատար քաղաքական գործիչներին, որոնք ստիպված են լինելու լուծել սույն խնդիրը, քանզի մտաբերելով իրանական ճգնաժամի բոլոր փուլերը՝ կհամարձակվեմ պնդել. դժվար է հարյուր տոկոսով համոզված լինել, թե մի մոտեցումը մյուսից լավն է:

*Չարդ* – Միթե Ռոմնին վերջերս «Foreign Affairs»-ում գրեց, որ «արմատական իսլամի սպառնալիքն այնպես իրական է, ինչպես նացիստական Գերմանիայի ու Խորհրդային Միության սպառնալիքը»: Այդ դրույթը չէ՞, արդյոք, մեզ ուղղորդում վտանգավոր ճանապարհով: Այս կարծիքը գերակշռում է ոչ միայն հանրապետական, այլեւ նրանից դուրս շրջանակներում:

*Պատ.*– Դա սխալ համեմատություն է: Ինչպե՞ս կարելի է լուրջ ընդունել Ռոմնիի կամ Ջուլիանայի ու Լիբերմանի խոսքերն այն մասին, թե երրորդ աշխարհի ոչ զարգացած արդյունաբերությամբ երկիրը, որն ունի համեմատաբար սուղ ռազմական պաշարներ, նույնպիսի վտանգ է ներկայացնում, ինչպիսին 1939թ. ներկայացնում էր Եվրոպայի ամենաառաջատար արդյունաբերական ազգը՝ աշխարհի ամենաարդիական բանակով, կամ ինչպիսին անցյալ դարի 50-60-ական թվականներին ներկայացնում էր հզոր Խորհրդային Միությունը՝ ողջ աշխարհում ճանաչում վայելող գաղափարախոսության կրողը՝ իր պատկառելի միջուկային զինանոցով:

*Հարց*– Գոյություն ունի՞, արդյոք, ամերիկյան լսարանի իրազեկվածությունը բարելավելու որևէ միջոց, թե՞ Դուք արդեն հրաժարվել եք այդ մտադրությունից:

*Պատ.*– Եթե մեզ մոտ լինե՞ր պլատոնական հասարակություն, կարելի էր նախագահի թեկնածուների համար մտցնել պարտադիր քննություններ, որպեսզի նրանք, ովքեր չեն բռնի այդ քննությունը, ավտոմատ կերպով հեռացվեն նախագահական մրցարշավից:

*Հարց*– Ձեզ չի՞ թվում, արդյոք, որ ժամանակն է վերափոխել մեր ժողովրդին, ինչպես մի անգամ ասել է Բրեխտը:

*Պատ.*– Դա կլինե՞ր չափից ավելի հավակնոտ նպատակ: Ես կբավարարվեի նախագահի թեկնածուներին վերափոխելով:

*(տպագրվում է կրճատումներով)*

**«Россия в глобальной политике». № 1, 2008**

## **ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԵՐՏՈՂՆԵՐԸ\* ՎԵՆՍԱՆ ԺՈՎԵՐ**

*Նրանք հեղափոխությունն արտահանում են Արևելյան Եվրոպա ու Կենտրոնական Ասիա:*

*Նրանք երիտասարդ են, բավական կրթված. նրանց ընդհանուր լեզուն անգլերենն է: Որպես կանոն՝ նրանք աշխատում են արեւմտյան հաստատություններում ու կազմակերպություններում՝ հիմնականում ամերիկյան: Նրանց կարելի է կոչել «միջազգային ժողովրդավարական բրիգադներ», որոնց գործունեությունը համակարգում է Վաշինգտոնը: Նրանցից մի քանիսն անձամբ Ջորջ Բուշի կողմից արժանացել են «ազատության հաղթողների» կոչմանը:*

*Նրանց ներկայացուցիչների հետ մենք հանդիպեցինք Բելգրադում եւ Թբիլիսիում, ինչպես նաեւ Բրատիսլավայում ու Կիեւում, որոնք մանրամասնորեն շարադրեցին հետհամայնավարական բռնապետությունների տապալման իրենց «դեղատոմսերը»:*

Նրանցից ամենափորձառուին կոչում են Պավել Դեմեշ: Նա սլովակ է, 49 տարեկան եւ առաջիններից է ոտք դրել այդ ճանապարհին: 2000թ. Դեմեշը գաղտնի համակարգում էր ընդդեմ Միլոշեվիչի՝ արտասահմանյան օգնության ծրագիրը: Անցյալ տարի նա (նույնպես գաղտնի) ուկրաինական հեղափոխականների խորհրդատուն էր: Բրատիսլավայում ղեկավարում է շատ ազդեցիկ ամերիկյան ոչ կառավարական կազմակերպության՝ «German Marshall Fund»-ի արեւելաեվրոպական բաժանմունքը: Նախկինում լինելով իր երկրի ԱԳ նախարար՝ նա հիմնավորապես գիտի նախկին խորհրդային բլոկի քաղաքական իրադրությունը եւ գիտի, թե ինչպես ընտրել հեղափոխություն անցկացնելու ամենահարմար պահը:

Հաջողությունն, առաջին հերթին, պայմանավորված է առանց բռնության դեմարշով: «Բռնության չդիմելը տալիս է բարոյական առավելություն եւ առաջ բերում մյուսների աջակցությունը, եւ հետո՝ բռնությունն այն ոլորտն է, որտեղ իշխանությունն ուժեղ է»,—բացատրում

<sup>1</sup> Սույն հոդվածն արդեն տպագրվել է մեր հանդեսի 2005թ. թիվ 7-ում: Հաշվի առնելով թեմայի նկատմամբ հետաքրքրությունը մեր օրերում՝ հարկ ենք համարում այն վերատպել—*խմբ.:*

է Դեմեշը: Հաջողության երկրորդ բանալին գործողությունների մեթոդի մեջ է: «Քվեարկության օրը, երեկոյան,—պատմում է նա,—հավաքվում են կեղծիքների ապացույցները, եւ այդ տեղեկությունները շատ արագ տարածվում են երկրով մեկ: Եվ անմիջապես հարյուր հազարավոր մարդիկ դուրս են գալիս փողոց: Հետո նրանք պետք է խաղաղ ճանապարհով հսկողության տակ վերցնեն պետական հիմնարկները, որպեսզի ցույց տան ինքնակալներին, որ օրինական իշխանությունն անցել է ուրիշի ձեռքը: Եվ քանզի ոստիկանությունը չի կրակում՝ գործն արված է»:

Սա՝ տեսությունում: Որպեսզի իմանանք, թե գործնականում ինչպես է լսենք սերբ Սրջա Պոպովիչին: Չնայած 32 տարեկան է՝ այդ բարձրահասակ եւ վտիտ անձնավորությունն արդեն առասպելական կերպար է: Նա 21-րդ դարի առաջին հեղափոխական շարժման կազմակերպիչն է, ինչը մնացածների նախատիպը հանդիսացավ. 2000թ. նրա «Отор»-ը («Դիմադրություն»), չթափելով ոչ մի կաթիլ արյուն, տապալեց Միլոշեւիչին: Այդ օրվանից խորհուրդների համար Սրջա Պոպովիչին դիմում են գրեթե ամեն տեղից՝ անգամ Ջիմբաբվեից: Որպեսզի բավարարի պահանջարկը, նա հիմնեց հեղափոխության փորձագետների բյուրո՝ «Canvas Group»: «Սա մասնավոր բիզնես է,—խոստովանում է նա,—սակայն բյուրոն գրանցված է որպես ոչ կառավարական կազմակերպություն, որպեսզի չմտնի տուրքերը»: Տարեկան շրջանառությունը՝ «առեւտրական գաղտնիք է»: Բելգրադի կենտրոնի նորածեւ «Movie Bar»-ում (որի սեփականատերն է), սեղանի շուրջ նստած, Սրջան բացում է գաղտնիքը. «Հեղափոխության հաջողության համար անհրաժեշտ է երիտասարդություն, երիտասարդություն ու նորից երիտասարդություն: Ինչո՞ւ: Որովհետեւ երիտասարդ էնտուզիաստները քաջ են, եւ իշխանությունը քիչ կարող է ազդել նրանց վրա: Նրանք չունեն երեխաներ, աշխատանք, հարստություն. նրանք կորցնելու ոչինչ չունեն»: Կա եւս մեկ պատճառ՝ առավել գործնական բնույթի, նույնիսկ փոքր-ինչ ցինիկ: «Ամեն անգամ, երբ վարչակարգն ուժ է կիրառում անգեւ երիտասարդության հանդեպ, ծեծում նրանց ու բանտ նետում,—ասում է Պոպովիչը,—նա թիկունք է դարձնում նրանց հայրերին, պապերին, բարեկամներին, մտերիմներին... Կարճ ասած՝ շատերին, այդ թվում՝ նաեւ իրեն հավատարիմ կողմնակիցներին: Եվ հենց սա՛ է որոնելի նպատակը»:

«Ցանկանո՞ւմ եք մի խորամանկություն պատմեմ,—շարունակում է նա ժպիտով:—Ցույցերի ժամանակ, որոնք խոստանում են ավարտվել բախումներով, առաջին շարքում կանգնեցրեք սպիտակ վերնաշապիկներով երիտասարդ աղջիկների: Եվ սպասեք ոստիկանության գրոհին»:

Արդյունքն ապահովված է. մի քանի հարվածներից հետո սպիտակ վերնաշապիկների վրա մի քիչ (կամ՝ ցավոք, շատ) արյուն կլինի: Ու կստացվեն փայլուն կադրեր, որոնք կշրջեն ողջ աշխարհի էկրաններով... Եվ վարչակարգը կվարկաբեկվի»:

Չաջող հեղափոխությունը զարգանում է նույնքան ճշգրիտ սցենարով, ինչպիսին համակարգչային ծրագիրն է:

*Առաջին փուլ.* «Ընտրություններից շատ առաջ հարկավոր է ստեղծել ծայրահեղ շահագրգիռ երիտասարդության խմբեր, որոնք կլինեն «նիզակի ծայրակալը»՝ հեղափոխության գործիքը»,— բացատրում է Պոպովիչը: Այդ խմբի համար անհրաժեշտ է ընտրել անուն: Ինչպիսի՞:

Լսենք Ալեքսանդր Մարիչին: «Օտոր»-ի մյուս երեք վետերանների հետ մեկտեղ այս 30-ամյա սերբը Բելգրադում ստեղծել է հեղափոխության եւս մեկ փորձագիտական գրասենյակ. նա Պոպովիչի մրցակիցն է: Մարիչը երաժշտամուլ է, եւ դա օգնեց նրան ընտրել անվանումը: Չեղափոխական խմբի անունը պետք է լինի կարճ, երկու վանկից ոչ ավելի, հեշտ հիշվող՝ ինչպես «Levis»-ը կամ «Coca»-ն, եւ հզոր՝ ինչպես կարգախոսը: Այն լինելու է հեղափոխության ստորագրությունը, «մակնիշը»:

*Երկրորդ փուլ.* հարկավոր է «գործի օգել» այդ նոր «մակնիշը»: Ահա բլիցկրիգ գործողության օրինակ: 2003թ. գարնանը Սորոսի հիմնադրամն Ալեքսանդր Մարիչին ու նրա թիմին ուղարկեց Վրաստան. նրանք պետք է դառնային սաղմնավորվող բողոքող խմբի առաջնորդների խորհրդատուները: Վրացի ներկայացուցիչները 20-ն էին, եւ նրանք արդեն ընտրել էին անվանումը՝ «Կմարա» («Բա՛վ է»): Մնում էր երկրով մեկ տարածել այդ անունը: Բելգրադցի «Չե Գեւարա»-ները առաջարկեցին ծրագիր. վրացի երիտասարդ էնտուզիաստներն այն անմիջապես ի կատար ածեցին: Ապրիլյան գիշերը նրանք թբիլիսիի եւ ինն այլ քաղաքների գլխավոր փողոցներում փակցրին «Կմարա» մակագրությամբ հարյուրավոր պլակատներ: Արդյունքը գերազանցեց բոլոր սպասելիքները. լուսաբացին ողջ երկիրը միայն խոսում էր այդ պլակատների մասին: Շեւարդնաձեն ծուղակն ընկավ: Այդ «խզբզոցներն» արհամարհելու փոխարեն, նա ռադիոյով ու հեռուստատեսությամբ շարունակ հանդես էր գալիս մերկացումներով՝ ականա գովազդելով այդ փոքրիկ խումբը, որը բոլորին թվում էր որպես զանգվածային շարժում: Մարքեթինգային գրոհը հաջողվեց. մի գիշերվա ընթացքում «Կմարա» հեղափոխական «մակնիշը» գործի դրվեց:

*Երրորդ փուլ.* գտնել միջոցներ, քանզի խմբին շուտով անհրաժեշտ է լինելու տպել հազարավոր թռուցիկներ, պիտակներ, թողարկել մակագրություններով վերնաշապիկներ: Չարկավոր է ստեղծել ինտերնետային կայք, գնել քարթրիջներ, մոբիլ հեռախոսներ, պլակատներ... Շարժմանն

անհրաժեշտ է լինելու նաև կազմակերպել իր մարտնչող կողմնակիցների հավաքը, որոնք, պետք է հուսալ, կժամանեն երկրի բոլոր ծայրերից: Այդ նպատակով անհրաժեշտ է վճարել գնացքի հարյուրավոր տոմսերի, հյուրանոցներում անցկացվող գիշերների, վարձակալվող բնակելի տարածքների, սննդի համար: Եվ հետո՝ պահանջվելու է արտասահմանյան խորհրդատուների ծառայությունների վճարումը: Կարճ ասած՝ անհրաժեշտ է գտնել «ընդամենը» մի քանի միլիոն դոլար:

Որպեսզի դրանք ճարվեն, պետք է գործի լծվել նախապես, քանզի նման գումարներ կարելի է գտնել միայն արտասահմանում: Տեղերում հարուստ գործարարներն այս ձեռնարկին անվստահությամբ են վերաբերվում. նրանք չեն ցանկանում փչացնել հարաբերություններն իշխանությունների հետ: Սոսկ հեղափոխության սկսումից նրանք կնետվեն մյուս ճամբարը եւ կապոցներով փողեր կտան երիտասարդ հեղափոխականներին: Իսկ առայժմ օգնությունը պետք է փնտրել դրսում, մասնավորապես՝ Վաշինգտոնում, որովհետեւ, համաձայն ընդհանուր կարծիքի, եվրոպացիները զգուշավոր են, դանդաղկոտ ու ժլատ, բացառությամբ, այն էլ միայն առանձին դեպքերում՝ բրիտանացիների, հոլանդացիների եւ լեհերի: Ֆրանսիացիներին երբեք չեն դասում «դոնորների» շարքը:

Ինչ վերաբերում է «նարնջագույն հեղափոխությանը», ապա դիմումները ԱՄՆ խոշոր մասնավոր հիմնադրամներին ու հասարակական կազմակերպություններին (USAID եւ National Endowment for Democracy) իրականում սկսվեցին դեռ 2003թ. աշնանը, այսինքն՝ իրադարձություններից մեկ տարի առաջ: Սլովակ Բալաշ Յարաբիկն օգնել է ուկրաինական «Որօ» խմբին՝ Ատլանտիկայի մյուս ափից դրամական օժանդակություն հայթայթել: Դրա համար նա գումար է ստացել ամերիկյան «Freedom House» կազմակերպությունից, որը չի ցանկացել միայնակ ֆինանսավորել «Որօ»-ին: Այո՛, հեղափոխությունում, ինչպես եւ բիզնեսում, հաճախ է ամեն ինչ սկսվում ներդրողների խորհրդակցությունից... «Չհեղափոխությունը բարձր մրցակցությամբ շուկա է,—ասում է Յարաբիկը, որը բարձրագույն կրթություն ստացել է Կոլումբիական համալսարանում:— Ժողովրդավարական խմբերի առաջնորդները պետք է ուղեւորվեն Վաշինգտոն, որպեսզի լավագույնս «իրենց վաճառեն» կապիտալ տվող հիմնադրամներին: Որպեսզի պատրաստվեն այդ մեծ քննությանը, հարկ է լինում հղկել սեփական փաստարկները, պատրաստել ծրագրեր եւ ֆինանսական աղյուսակներ...»: Այո՛, ճիշտ այնպես, ինչպես բիզնեսում:

*Չորրորդ փուլ.* հավաքել առավելագույն թվով ակտիվիստներ: Ստանալով առաջին գումարները՝ «բարի լուր» տանելու համար



շրջաններ են ուղարկվում հեղափոխության շրջիկ գործակալները: Ժողովից ժողով նրանք պետք է նորից կրկնեն, թե ամեն ինչ հնարավոր է, որ իրենց հաջողվել է սեփական երկրում տապալել դիկտատորին:

Սովորաբար ժողովները կազմակերպվում են բաց երկնքի տակ՝ քաղաքից դուրս: Որպեսզի չհարուցեն ոստիկանության կասկածները, ասում են, թե դա հանգստի մեկնող խումբ է: Ժողովներում տիրող մթնոլորտը միաժամանակ հիշեցնում է եւ «խենթերի ակումբ», եւ զինվորական պատրաստության պարապմունք:

«2004թ. ապրիլին,—պատմում է հետխորհրդային տարածքում հեղափոխությունների գծով խորհրդատու՝ 24-ամյա Կետո Կոբիաշվիլին,—մի հոլանդական կազմակերպություն ինձ ուղարկեց Օդեսա, որպեսզի հավաքեմ մոտ 30 երիտասարդ մարդկանց, պատրաստեմ ու ոգելորեն նրանց: Ես երկու շաբաթ ապրում էի ճոխ հյուրանոցում, առանձին համարում: Դեռ ավելին՝ ստացա 250 եվրո: Երա՛գ էր»: Սա դեռ ամենը չէ: «Դրանից մի քանի ամիս անց Սորոսի հիմնադրամը Ալմա Աթայում կազմակերպեց սեմինար ղազախ ակտիվիստների համար: Այնտեղ էլ մենք հանդիպեցինք մեծ հյուրանոցում: Ամեն ինչ մեր տրամադրության տակ էր. տեսախցիկներ, որպեսզի պատրաստվենք հարցազրույցներին, եւ անգամ սարքավորումներ՝ միկրոֆոնները խլացնելու համար, որոնք ղազախական գաղտնի ոստիկանությունը չէր զլացել տեղադրել նիստերի դահլիճում»:

*Չինգերորդ փուլ.* հասարակական կարծիքի ուշադրության գրավման նպատակով՝ միաժամանակ երկու կամպանիա տանել: Սա ամենաբարդ փուլն է. այստեղ պահանջվում է առավելագույն նրբություն: Առաջին կամպանիայի նպատակն է՝ բացատրել քաղաքացիներին, թե որոնք են ընտրություններում իրենց իրավունքները եւ դրդել նրանց քվեարկելու: Երկրորդի նպատակն է՝ կոռումպացված եւ ավտորիտար վարչակարգերի մերկացումը: Յուրաքանչյուր կամպանիա ունի իր անվանումը, կարգախոսը, բուկլետը: Այս երկու գործողություններն իրականացվում են ակտիվիստների միեւնույն խմբով, բայց ուշադրություն. այդ մասին չպիտի իմանան: «Չակառակ դեպքում առաջին կամպանիան, որը պիտի լինի անկախ, կձախողվի»,—բացատրում է Դմիտրի Պոտեխինը: Ոչ բարձրահասակ, կլոր ակնոցներով այս 29-ամյա ժպտերես ուկրաինացին «նարնջագույն հեղափոխության» առանցքային դեմքերից էր: Յուշչենկոյի հաղթանակից հետո նա անմիջապես մեկնեց Մոլդովա, որպեսզի նրանց «բերի իր հավատքին»: Այս նորահավատը մարքեթինգի արհեստավարժ մասնագետ է: «Միաժամանակ ու գաղտնի երկու գործողություններ անցկացնելը չափազանց դժվար է,—ասում է նա:—«Որո» շարժումում մենք այնքան քիչ էինք, որ ակտիվիստները պետք է օրվա ընթացքում մի

քանի անգամ զգեստափոխվեին՝ տարածելով այդ եւ մյուս կանպանիայի թռուցիկները...»:

*Վեցերորդ փուլ.* փողոցներում, առանց բռնության գործադրման, կատարել արդյունավետ գործողություններ: Նպատակը՝ արթնացնել քաղաքացիներին եւ գրգռել ուստիկանությանը: Առավել նախընտրելի մեթոդը՝ «հայտնվող եւ անհետացող» խմբի կազմակերպումն է: «Դրանք մեծաքանակ մարդկանց կարծատել հավաքներ են, եւ ուստիկանությունը չի հասցնում ոչ ոքի կանգնեցնել,—բացատրում է Դմիտրի Պոտեխինը:—Օրինակ, հեղափոխական խմբի 15 անդամներ զգեստավորվում են բանտարկյալների հագուստով եւ հագնում գորշ վերարկուներ: Մոբիլ կապի միջոցով նրանք նշանակում են հանդիպում մայրաքաղաքի գլխավոր փողոցում այն պահին, երբ այնտեղ խառնաշփոթ է: Նշանակված ժամին հանում են վերարկուներն ու նմանվում բանտարկյալների: Նրանք մի քանի անգամ գոչում են. «Ես քվեարկում եմ X-ի օգտին»: X-ն, անշուշտ, հանդիսանում է տեղի դիկտատորը: Այնուհետեւ ցուցարարները հագնում են վերարկուները, հեռանում մետրոյի խորքը եւ կորչում անհետ: Արդյունքն ապահովված է. ուստիկանությունը զագագած է, սկսվում են բռնությունները»:

*Յոթերորդ փուլ.* պահպանել խումբը: Ինչպե՞ս: Սերբ Միլոշ Միլենկովիչն իր բելառուս կամ ադրբեջանցի «կլիենտներին» սովորեցնում է ընդհատակյա գործունեության այբուբենը: «Սրանք դիմակայության դասական հնարքներ են,—ասում է 27-ամյա այս հաղթանդամ, զվարճասեր անձնավորությունը:—Յեղափոխական խումբը չպետք է մեկ մարդ ղեկավարի: Յակառակ դեպքում նրա գործունեությունն առաջնորդի ձերբակալության պատճառով կաթվածահար կլինի: Պետք է ստեղծել կոլեգիալ ղեկավարություն, այսինքն՝ առաջնորդի գործառնությունները բաշխել մի քանի պատասխանատու անձանց միջեւ, որոնք չգիտեն այն մանրամասները, թե ինչ են անում մյուսները»: Մեկ այլ օրինակ. «Որպեսզի խճճվի կառավարման սխեման, անհրաժեշտ է ամեն շաբաթ փոխել պաշտոնական ներկայացուցչին»: Միլենկովիչի կարծիքով, հարկավոր է պահպանել գաղտնիության այս մթնոլորտը: «Երիտասարդներին հրապուրում են խորհրդավոր կազմակերպությունները,—չարունակում է նա:—Գաղտնիության այս հմայչությունը թույլ է տալիս հաղթահարել հուսահատությունը եւ միանալ խմբին, որին իշխանությունը համարում է ահաբեկչական»:

*Ութերորդ փուլ.* սովորել կառավարել վախը: «Դրա համար կան բազմաթիվ նրբություններ,—ճշտում է Միլոշ Միլենկովիչը:—Ցույցի ժամանակ երիտասարդները երբեք չպետք է իրենց մեկուսացված զգան. նրանք

պետք է մյուսների հետ մշտապես ֆիզիկական շփման մեջ լինեն: Անհրաժեշտ է նաեւ, որ նրանք երգեն ու չլսեն ոստիկանության կամ զինվորների անհանգստություն առաջացնող աղմուկը: Որպեսզի թաքցվի ցույցի առջեւ բազմաքանակ զինված մարդկանց առկայությունը, կարելի է երթի սկզբից տանել մեծ ցուցապաստառ. այն ցուցարարներին կխանգարի տեսնել իրենց վախեցնող զինվորների կուտակումները»: Մյուս հնարքը՝ բացատրել, որ ձերբակալությունը ողբերգություն չէ: Սեմինարներում սկսնակ հեղափոխականների դաստիարակները կազմակերպում են ոստիկանական շուրջկալների փորձեր: Ոմանք հանդես են գալիս ոստիկանների դերում, մյուսները՝ ցուցարարների: Սեմինարներում սովորեցնում են պատասխանել խուսափողաբար, երբեք չդրսելորել ագրեսիվություն, նույնիսկ ժպտալ: Մշակվում է նաեւ բանտ նետված ընկերներին աջակցելու ռազմավարությունը: «Նրանք, ովքեր չեն ձերբակալվել, պետք է իմանան ում դիմել՝ որ փաստաբանին, ոչ կառավարական որ կազմակերպությանը, տեղական կամ արտասահմանյան որ լրագրողին: Նրանց մոտ պիտի լինի այն ակտիվիստների ցանկը, որոնց հետ հնարավոր է կապվել եւ որոնք այնուհետեւ իրենք կկապվեն նրանց հետ, որպեսզի ոստիկանական տեղամասի առջեւ ցույց կազմակերպեն, ինչի մասին կխոսեն զանգվածային լրատվամիջոցները»,— ասում է Գեորգի Կանդելակին, որն անցյալ տարի այս կանոնները բացատրում էր դազախներին: Եվ քաղաքական գիտությունների այս մասնագետն ու ամերիկյան համալսարանի շրջանավարտը հետեւություն է անում. «Այդպիսով, մենք հակառակորդի ուժը շրջում ենք հենց իր դեմ»:

Ահա՝ ամեն ինչ իր տեղում. ակտիվիստներին հավաքագրում եւ ուսուցանում են, տարածվում են մի քանի հազար թռուցիկներ, կազմակերպվում են մի քանի «հայտնվող եւ անհետացող» խմբեր, ու շարժումը հասցնում է առաջին հարվածները: Եվ երբ պետք է սկսվեն անխուսափելիորեն կեղծիքներով ուղեկցվող ընտրությունները, նորաթուխ հեղափոխականներն արդեն պատրաստ են դրանք բողոքարկելու: Դաստիարակների աշխատանքն ավարտված է:

Առաքելությունն իրականացված է, եւ ժողովրդավարական հեղափոխության շրջիկ գործակալներն արդեն նոր նպատակներ ունեն: Նախկին խորհրդային կայսրությունում նոր հեղաշրջումներ են պատրաստվում: Որպեսզի արագացվի գործընթացը, նրանք մտադրված են Կիեւում հիմնել հեղափոխությունների տարածման նոր կենտրոն՝ ժողովրդավարության միջազգային ինստիտուտ անվամբ: 2005թ. փետրվարին ինստիտուտի ստեղծման նախաձեռնող, պատվախնդիր Վլադիսլավ Կասկիվն իր նախագիծը ներկայացրեց անձամբ Ջորջ Բուշին: «Ես նրան ասացի, թե

կցանկանայի, որ ինստիտուտը հովանավորեին եւ համակարգեին այնպիսի ճանաչված դեմքեր, ինչպիսիք են Վազլավ Զավելը, Լեխ Վալենսան կամ Մադլեն Օլբրայթը»,—ասում է «Որօ» շարժման նախկին առաջնորդը, որը «նարնջագույն հեղափոխությունից» հետո ջինսը փոխեց փողկապով եւ մուգ կոստյումով: Այս լուրջ անձնավորությունը բախտ է ունեցել տպավորություն գործել Սպիտակ տանը. ամերիկացիները, երեւում է, նրան խոստացել են օգնել, այդ թվում՝ նաեւ ֆինանսապես:

Նման ուշադրությունը նյարդայնացնում է Արեւելքի վերջին բռնապետերին: Տարեմուտին ընտրություններ կանցկացվեն Ղազախստանում: Տեղի տիրակալն արդեն նախագուշական միջոցներ է ձեռնարկել. նա բանտ է նստեցրել շատ ակտիվիստների եւ մերժել Վլադիսլավ Կասկիվին՝ գտնվել իր տարածքում:

Ինչ վերաբերում է բելառուսական միապետին, որի դեմ հղացված «թավշյա հեղափոխությունը» 2001թ. պարտվեց, ապա նա ջանում է ցանկացած զնով «ժողովրդավարական բրիգադների» անդամներին հետ պահել իր երկրի տարածք մտնելուց: Վերջերս նա բանտ նետեց ուկրաինացի հինգ ակտիվիստների: Անցած տարի նրա հրամանով ծեծի ենթարկվեցին ու հետո երկրից վտարվեցին սերբ եւ սլովակ հեղափոխականները: Սակայն, այնուամենայնիվ, հեղափոխության որոշակի պատրաստություններ երկրից դուրս կատարվում են: «International Republican Institute» կազմակերպությունը, որը ֆինանսավորվում է ԱՄՆ Կոնգրեսի կողմից, հարեւան Լիտվայում գաղտնի պատրաստում է բելառուս ակտիվիստներին:

2004թ. վերջին «Freedom House» հիմնադրամը Ռուսաստանը դասեց ոչ ազատ երկրների շարքը: Խորհրդային Միության փլուզումից հետո նման բան առաջին անգամ էր տեղի ունենում: Ռուսաստանի նախագահին իրենց «ռազմական ավարների» հավաքածուում ավելացնելը նոր «Չե»-երի երազանքն է: Առավել եւս՝ այդ է նրանց գերագույն նպատակը: Մի քանիսն արդեն աշխատում են սկզբնավորվող հեղափոխական խմբերում: Այս ամռանը նախատեսված է սեմինարների անցկացում Ղրիմում եւ Ռուսաստանում, որոնց կոնկրետ վայրն առայժմ գաղտնի են պահում: Սակայն Կրեմլի տիրոջ տապալումը դյուրին գործ չէ: Թվում է, թե նա ամուր ձեռքով պահում է իր հատուկ ծառայություններն ու բանակի մեծ մասը: Նա բացահայտորեն պաշտպանեց արյունոտ բռնարարներն Ուզբեկստանում, եւ այդպիսով հասկանալ տվեց, որ ինքն էլ չի վախենա կրակել ամբոխի վրա, եթե դա անհրաժեշտ համարի: Վերջապես, ՌԴ նախագահն ակտիվիստների գործունեությունը խափանելու համար այլ միջոցներ է գտել: Նա ստեղծել է սեփական երիտասարդական կազմակերպությունը:

Այն «Отпор», «Կմարա» եւ մյուս շարժումների նմանակն է՝ նույնպես երկվանկանի անվանումով՝ «Наша». նույն վերնաշապիկներն են, նույն ժպիտները: Բայց ծրագիրն ազգայնական է, ելույթները՝ կոշտ: Եվ սա ամենը չէ: Անվտանգության դաշնային ծառայությունը դես ու դեն է ընկնում, լրտեսում, մանիպուլացնում. գործակալները ներդրվում են «բողոքող» խմբերում եւ ստեղծում այլ՝ կեղծ խմբեր, որպեսզի խառնեն խաղաքարտերը: Մոսկվայում միջազգային ժողովրդավարական գործակալների համար դժվար կլինի:

Շատ հարցեր են մնում: Առաջին. արդյո՞ք «ժողովրդավարական բրիգադների» անդամները Վաշինգտոնի սովորական գործակալներ են, ինչպես ցանկանում են ներկայացնել Կրեմլում եւ այլուր: Գիշտ է, նրանք աշխատում են ամերիկյան (երբեմն՝ նաեւ եվրոպական) կազմակերպությունների համար, եւ դա չեն թաքցնում: Գիշտ է նաեւ այն, որ նրանք կիսում են քեռի Սեմի արժեքները՝ ժողովրդավարությունն ու դուլարը, եւ ցանկանում են դրանք ամուր ներդնել հետխորհրդային տարածքում: Վերջապես, ակնհայտ է, որ Սպիտակ տունը, հանձինս նրանց, տեսնում է իր «փափուկ ուժի» վեկտորներին, Ռուսաստանի հետ տարվող աշխարհաքաղաքական շախմատային խաղի զինվորներին: Բայց արդյո՞ք նրանք ԱՄՆ շահերը վեր են դասում այն երկրների շահերից, որտեղ աշխատում են: Եվ ինչպիսի՞ Ամերիկայի մասին է խոսքը՝ «Freedom House»-ի նեոպահպանողականների՞ Ամերիկայի, թե՞ ֆինանսիստ-հումանիստ Ջորջ Սորոսի, որը միլիոնավոր դոլարներ է ծախսում Ջորջ Բուշի հետ պայքարում:

Չարք երկրորդ. իրո՞ք այդ հեղափոխությունները ժողովրդական էին, թե՞ մի քանի ակտիվիստների ձեռքի գործ: Իրականում՝ եւ նա, եւ մյուսը: Ինչպես մենք ցույց տվեցինք, դրանք կանխապես նախապատրաստվել էին ակտիվիստների ոչ մեծ կորիզի կողմից: Որպեսզի արթնացնեն ժողովրդին, բորբոքեն նրան, այդ խմբերը դիմեցին քարոզչության այժմ բոլորին հայտնի հնարքներին, իսկ երբեմն՝ նաեւ մանիպուլյացիաների: Սակայն առանց ավտորիտար ու կոռումպացված վարչակարգի կողմից հուսահատության հասցված ժողովրդի ցասման, առանց նրա կամքի՝ կրկին թույլ չտալու գողանալ իրենից ընտրությունները եւ առանց հարյուր հազարավոր մարդկանց, ովքեր կամովին դուրս էին եկել Բելգրադի, Կիեւի կամ Թբիլիսիի փողոցները, ոչինչ տեղի չէր ունենա:

Սակայն ծագում է եւս մեկ՝ վերջին հարցը. իսկ ի՞նչ է լինելու հեղափոխությունից հետո: Այլ խոսքով՝ ի՞նչ կկատարվի այդ ժողովուրդների հետ մի քանի տարի անց: «Չե՞ն հայտնվի, արդյոք, նոր ղեկավարները նույն փոսում, ինչպես իրենց նախորդները, որոնք, հարկ է հիշել,

նույնպես իշխանության եկան ժողովրդական ապստամբության ալիքի վրա»,—հարցնում է Միջազգային հետազոտությունների կենտրոնի Արեւելյան Եվրոպայի գծով խոշոր մասնագետ Ժակ Ռուպնիկը: Սերբական օրինակն ավելի շուտ հուսադրում է: Միլոշեւիչի վարչակարգի անկումից հինգ տարի անց երեւում է, որ ժողովրդավարությունը Բելգրադում հետզհետե կայունանում է, եւ մարդու իրավունքներն, ընդհանուր առմամբ, պաշտպանվում են: Սակայն Թբիլիսիի պարագայում, որտեղ Ջորջ Բուշը մայիսին որպես մեսիա ընդունվեց, կացությունն առավել խնդրահարույց է. 2003թ. «վարդերի ապստամբության» շատ առաջնորդներ արդեն հանդես են գալիս նոր իշխանությունների դեմ՝ կոռուպցիային ու միլիտարիզմին վերադառնալու մերկացումներով:

Այսպիսով՝ խաղն ավարտված չէ: Եվ հեղափոխության «ալքիմիկոսների» դեղատոմսերով գրքերը դեռ պետք կգան: Քանզի Թբիլիսիում, Կիեւում կամ Բիշքեկում նրանց գուցե մեկ անգամ եւս հարկ լինի ամեն ինչ նորից սկսել:

**Le Nouvel Observateur**

### **ՅԱՅ ՑԵՂԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ**

ա) Ցեղն է գոյարմատականը: Դրանում են օրգանապես ներդաշնակուած ոգին եւ արիւնը: Դա՛ է մեր բարոյականի, խղճմտանքի եւ նպատակի կառավարիչը:

բ) Ցեղն է ազգութեան հիմքը, իսկ վերջինը՝ ընկերային միակ բնական կազմակերպութիւնը:

գ) Պետութիւնը ղեկավարում է ցեղի կամքով եւ ազգային ընկերութեան պաշտպանման եւ զարգացման ծառայելու սկզբունքով:

դ) Ընկերութեան կազմակերպութիւնը եւ ընկերային արդարութիւնը յենւում են ներցեղային բարոյականի վրայ: Ներցեղային բարոյականով առաջնորդուող ընկերութիւնը միայն կարող է ապահովել ազգի գոյատեւումը, ինչպէս եւ նրա անդամների հոգեւոր, բարոյական, տնտեսական շահերի ամբողջականութիւնը:

ե) Անհատի ազատութեան, ստեղծագործութեան, պարտականութեան եւ երջանկութեան աստիճանաչափը՝ դա կախումի իր զգացումն է ցեղի ճակատագրից եւ ուրախ նուիրումը՝ նրա յաւիտենականին:

զ) Անհատն այն դէպքում է միայն ազատ, երբ մեռնելու կամքով է մօտենում բոլոր այն հարցերին, որոնք շօշափում են ցեղի եւ հայրենիքի ճակատագիրը:

է) Անհատն ստեղծագործ է, երբ նուիրապետական զգացում ունի իր ցեղի յաւիտենական արժէքների հանդէպ:

ը) Անհատը պարտաճանաչ է, երբ ունի իր խղճմտանքի վաւերացումը, թէ անթերի է նուիրումի իր կամքը՝ ցեղին:

թ) Անհատն երջանիկ է, երբ կեանքի բարձրագոյն իմաստը տեսնում է այն գիտակցութեան մէջ, թէ հօր է իր ցեղը:

ժ) Հզորանքն է աղբիւրը դրական ամեն առաքինութեան եւ ստեղծագործութեան: Դա՛ է կեանքի իմաստը:

ժա) Ցե՛ղն է հզորանքի պարզեւատուն:

ժբ) Անցաւորից դէպի անանցն երկարող ճամբին ցե՛ղն է միայն յաւիտենական: Նրան հաղորդակից դառնալով՝ միայն հնարաւոր է կենսաբանօրէն հաւատաւորել կամքը, իմաստաւորել կեանքը:

ժգ) Ցեղը ժխտուն է ամեն կարգի հատւածականութիւն, կուսակցականութիւն, դասակարգային «ես» եւ շահ՝ ազգի ներքին կեանքում: Դա պահանջադրում է հայոց լիազունար ազգահաւաքումը հայրենի երկնքի տակ եւ ազգային ներդաշնակ մի համակերպութիւն, որուն հայը՝ հայի մէջ տեսնում է ճակատագրի ճշմարիտ իր եղբայրը:

ժդ) Հայրենատէ՛ր է ցեղը - ստեղծագործ, նորոգիչ եւ յաղթանակիչ ներքին ամեն տկարութեան:

ժե) Ցեղային շարժման ամեն մի զինուորը պատուի ուխտով հաւատում է, թէ՛

- Հզորանքն է իմաստը հայ ճակատագրի:
- Յաւիտենական է Հայաստանը:

1943թ.



## **Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

<b>Գագիկ Տերտերյան</b> <b>ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԸՆՏՐԱԿԱՆ ԵՎ ՀԵՏԸՆՏՐԱԿԱՆ</b> <b>ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ</b> .....	<b>1</b>
<b>Ռուբեն Մելքոնյան</b> <b>ԾՊՏՅԱԼ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԿՐԹԱԿԱՆ</b> <b>ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ</b> .....	<b>5</b>
<b>Յաշար Քուրթ</b> <b>ՀԱՎԱՆԱԲԱՐ ԵՍ ՀԱՅ ԵՄ...</b> .....	<b>9</b>
<b>Սեւակ Սարուխանյան</b> <b>ՋԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԻՐԱՆԻ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՇՈՒՐՋ</b> ...	<b>13</b>
<b>Բագրատ Սարուխանյան</b> <b>ԱՄՆ–ԹՈՒՐԹՄԵՆՍՏԱՆ–ԱԴՐԲԵՋԱՆ.</b> <b>ԷՆԵՐԳԵՏԻԿ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՁԵՎԱԶԱՓ</b> ....	<b>17</b>
<b>Սուրեն Մանուկյան</b> <b>ԱՅԼԱՏՅԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՐԵՎՄՈՒՏՔՈՒՄ.</b> <b>ԻՍԼԱՄԱՖՈՐՄԱՅԻ ՄԱՍԻՆ</b> .....	<b>21</b>
<b>Արաքս Փաշայան</b> <b>ԻՍԼԱՄԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ</b> <b>ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎԸ ԴԱՔԱՐՈՒՄ</b> .....	<b>27</b>
<b>Ջրիգնեւ Բժեգիմսկի</b> <b>«ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ԻՍԿԱԿԱՆ ԱՌԱՋԱՏԱՐՈՒԹՅԱՆ</b> <b>ԵՎ ԱՊԱՇՆՈՐՀ ԳԵՐԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ»</b> .....	<b>32</b>
<b>Վենսան Ժոլլեր</b> <b>ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԵՐՏՈՂՆԵՐԸ</b> .....	<b>37</b>
<b>ՀԱՅ ՑԵՂԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ</b> .....	<b>47</b>

*Շապիկին պատկերված է  
Դարոյնք բերդը  
(Կոգովիտ գավառ)*

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի  
Հանրապետական կուսակցության հրատարակություն  
**Խմբագրական խորհուրդ**  
Երեւան, 375010, Մելիք-Աղամյան 2: Հեռ. 58 04 91, 58 04 83:  
Էլ. փոստ՝ hanrapetakan@hkh.am:  
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:  
Պայմանական 4 մամուլ: Տպաքանակը՝ 1000:  
Տառատեսակը՝ «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:  
Վկայական՝ Օ1Մ 000176:  
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: